

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ
ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՏԵՂԱԿԱՊՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(Լրամշակված տարբերակ)



Նախաձեռնող՝ «ԼՈՒՔ» ՍՊԸ
ՇՄԱԳ հաշվետվության մշակող՝ «Էկոնոմ Էկո» ՍՊԸ

ԵՐԵՎԱՆ 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	3
2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ	4
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՄԱԳ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՅՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	8
4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆԱԽԱԶԵՌՆՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ.....	9
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	9
5.1 Ենթակա տարածքի նկարագիրը	9
5.2 Շրջակա միջավայրի բնութագրերը.....	10
5.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը	10
5.2.3. Կլիմա և օդային ավազան	11
5.2.4. Ջրային ռեսուրսներ.....	23
5.2.5. Հողային ռեսուրսներ	23
5.2.6. Կենսաբազմազանություն	24
5.2.7. Հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ....	25
5.2.8. Պատմամշակութային հուշարձաններ	26
5.2.9. Սոցիալ-տնտեսական հարցեր.....	26
6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈԽԼԵՐՈՒՄ	26
6.1. Շահագործման փուլ	27
Էլեկտրամատակարարում.....	32
Էներգախնայողության ու էներգաարդյունավետության միջոցառումներ	33
6.2. Շինարարության փուլ.....	35
6.3. Բարեկարգում և կանաչապատում	41
7. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ.....	42
7.1 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն.....	42
7.2. Շինարարական նյութեր	43
8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	44
8.1. Օդային ավազանի վրա ազդեցություն	44
8.2. Ջրային ռեսուրսների վրա ազդեցություն.....	45
8.3. Հողային ռեսուրսների վրա ազդեցություն	45
8.4. Թափոնների առաջացում և կառավարում	46
8.5. Աղմուկի և թրթռումների ազդեցություն	47

8.6. Էներգախնայողության ու էներգաարդյունավետության միջոցառումներ	49
8.7 Ազդեցություն պատմամշակութային հուշարձանների վրա.....	49
8.8 Աշխատանքի անվտանգություն	50
9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	51
9.1 Շրջակա միջավայրի պահպանություն և մեղմացնող միջոցառումները	51
9.2 Մոնիտորինգ.....	52
10. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ.....	53
ՀԱՎԵԼՎԱԾ 1.ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ.....	Error! Bookmark not defined.
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՏԱՐԱԾՔԻ ԻՐԱԴՐԱՅԻՆ ՍԽԵՄԱ	56
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՏԱՐԱԾՔԻ ԻՐԱԴՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐՈՎ.....	Error! Bookmark not defined.
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԴՊՐՈՑԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ԵՎ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ	58
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ.....	60

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նպատակը	Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրում դպրոցի կառուցում
Նախաձեռնող	«ԼՈՒՔ» ՍՊԸ
Նախաձեռնողի կոնտակտային տվյալներ	«ԼՈՒՔ» ՍՊԸ հեռ.՝ +374 77 76 77 13 Էլ. հասցե՝ lookarchcompany@gmail.com
ՇՄԱԳ՝ հաշվետվության մշակող	«Էկոնոմ Էկո» ՍՊԸ, հեռ.՝ +374 94427523 Էլ. հասցե՝ economecoeia@gmail.com
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, գյուղ Ոսկեհատ, Մ. Մաշտոցի փող., 1/4 շենք
Հողամասի մակերեսը	31,767.4 մ ²
Դպրոցի նախագծային հզորությունը	432 աշակերտ

2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանության ոլորտին առնչվող օրենքներից:

Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

- **ՀՀ Սահմանադրություն (2015).** ըստ 10-րդ հոդվածի՝ ՀՀ ընդերքը և ջրային ռեսուրսները հանդիսանում են պետության բացառիկ սեփականությունը, իսկ ըստ հոդված 12-ի՝ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը, վերականգնումը և բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ հաշվի առնելով կայուն զարգացման սկզբունքները և պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Հոդված 12-ի 2-րդ կետը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

- **«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014)** կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

- **«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)** կարգավորում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման, պաշտպանության և վարչարարության հարցերը:

- **«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008)** սահմանում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը:

- **«ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002)** կարգավորում է ջրի օգտագործման, պահպանության և սպասարկման հարցերը:

- **«ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (2006)** կարգավորում է ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները՝ ընդգրկելով ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը

և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները:

- **«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004)** կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

- **«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.)** կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

- **«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2005)** կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:

- **«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը (2000)** կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:

- **«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը (1998)** սահմանում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության հիմնադրույթները և կարգավորում այդ գործունեության հետ կապված հարաբերությունները:

- **«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը (1998)** սահմանում է իրավական և քաղաքական հիմքեր ՀՀ-ում մշակութային և պատմական հուշարձանների օգտագործման համար և կարգավորում է հարաբերությունները պահպանության և օգտագործման միջև: Այն նկարագրում է նոր հուշարձանի հայտնաբերման դեպքում կիրառվող ընթացակարգերը, սահմանում է հուշարձանների պետական գրանցման կանոնները, դրանց շուրջ պահպանման գոտու գնահատումը և պատմամշակութային արգելավայրերի ստեղծումը:

- **«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2006)** սահմանում է Հայաստանի Հանրապետության համալիր կամ առանձին բնական օբյեկտների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի զարգացման, վերականգնման, պահպանման, վերարտադրության և օգտագործման իրավական հիմքերը և պետական քաղաքականության հարաբերությունները:

- **«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (1999)** սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը բուսական աշխարհի պահպանման, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է բուսական աշխարհի պետական գույքագրման և պետական մշտադիտարկման իրականացման նպատակները, բուսական աշխարհի Կարմիր գրքի կազմման պահանջները և մոտեցումները, բուսական աշխարհի օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու պայմանները, բուսական աշխարհի պահպանման դրույթները և

տնտեսական գործիքները բուսական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման համար:

- **«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (2000)** սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը կենդանական աշխարհի պահպանման, օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է կենդանական աշխարհի ուսումնասիրությունների, պետական մշտադիտարկման, պետական գույքագրման նպատակները, կենդանական աշխարհի Կարմիր գրքի կազմման սկզբունքները, կենդանատեսակների օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու հիմքերը, կենդանիների պահպանման դրույթները և կենդանական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման տնտեսական գործիքները:
- **«Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2002)** սահմանում է ՀՀ սեյսմիկ պաշտպանության բնագավառի կազմակերպման հիմնադրույթները և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները:
- **ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն (2003)** «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին». սահմանում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորվում է դրա հետ կապված հարաբերությունները:
- **ՀՀ կառավարության N 1343-Ն որոշում (14.09.2006)** «Թափոնների հաշվառման, գոյացման, հեռացման (ոչնչացման, վնասագերծման, տեղադրման) և օգտահանման կարգը սահմանելու մասին»:
- **ՀՀ Կառավարության որոշում N 1059-Ա (25.09.2014)** «Բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և ռազմավարության բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» հաստատում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը՝ համաձայն հավելվածի 1-ի և Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:
- **ՀՀ կառավարության N 1404-Ն որոշում (02.11.2017)** «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- **ՀՀ կառավարության N781-Ն որոշում (31.07.2014)** «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»
- **ՀՀ կառավարության N 385-Ն որոշում (15.03.2007)** «ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին»
- **ՀՀ կառավարության որոշում 967-Ն ՀՀ (14.08.2008)** «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»
- **ՀՀ կառավարության որոշում N 71-Ն (29.01.2010)** «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»

- **ՀՀ կառավարության որոշում N72-Ն (29.01.2010)** «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 102-Ն (28.12.2020)** ՀՀՀՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին
- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 49-Ն (24.03.2016)** «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրի շրջանակներում իրականացվող դպրոցական շենքերի ուժեղացման և նորի կառուցման համար Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերով թույլատրելի առավել բարձր պահանջներ և պայմաններ կիրառելու մասին
- **ՀՀ առողջապահության նախարարի հրաման N 12-Ն (28.03.2017)** «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին
- **ՀՀ առողջապահության նախարարի հրաման N15-Ն (19.09.2012)** «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական քննության շենքերի» N2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»
- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 43-Ա (05.04.2018)** «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին»
- **ՀՀ կառավարության որոշում N 438 (20.04.2002)** «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգ հաստատելու մասին»
- **ՀՀ Կառավարության N 108-Ն որոշում (08.02.2018)** «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» . սահմանում է բնակավայրերի կանաչ գոտիների ձևավորման, չափերի և տեսակային կազմի նկատմամբ ներկայացվող պահանջները:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՄԱԳ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությունն իրականացվել է ՀՀ օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին համապատասխան, որում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

1. նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը և դրա իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը,
2. նախատեսվող գործունեության տարածքում դաշտային այցերի ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
3. տվյալ տարածքի վերաբերյալ վերլուծությունները, քարտեզները, լուսանկարները:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակում,
2. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
3. բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության ներկայացում (ներառյալ՝ հանրային լսումների արձանագրությունն ու մասնակիցների ցանկը) Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆԱԽԱԶԵՌՆՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Սույն հաշվետվությունը մշակված է Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի դպրոցի կառուցման համար, որի պատվիրատուն հանդիսանում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ): Նախատեսվող գործունեության նախաձեռնողն է հանդիսանում «ԼՈՒՔ» ՍՊԸ-ն:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՀՀ Արմավիրի մարզի Ոսկեհատ բնակավայրի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրված հողամասի սահմաններում:

Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել.

- Անշարժ գույքի իրավունքի գրանցման N 07042026-04-0124 վկայականը,
- 2026թ. «ԳԵՈԶՈՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող և գործունեության տեղամասի համար իրականացված ինժեներաերկրաբանական հետազոտություններն ու համապատասխան եզրակացությունը,
- ՀՀ ում գործող օրենքներն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերը,
- Պատվիրատուի առաջադրանքը՝ պայմանավորված համապատասխան հատակագծային ու ծավալատարածական լուծումներով:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

5.1 Ենթակա տարածքի նկարագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրում: Դպրոցի նոր մասնաշենքերը նախատեսվում է կառուցել ներկայիս դպրոցի տարածքում:

Հողամասի մակերեսը կազմում է 31 767,4 մ² համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի (կադաստրային ծածկագիր՝ 04-081-0030-0039: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը ներկայացված է հավելված 1-ում:

Դպրոցի տարածքը կառուցապատված տարածք է, որտեղ գտնվում են ուսումնական մասնաշենքերը, կաթսայատունը, գուգարանը, պահեստը, ջրավազանը և հրաձգարանի շենքը:

Արմավիրի մարզի, Վաղարշապատ համայնքի, Ոսկեհատ բնակավայրի դպրոցը նախատեսվում է կառուցել ներկայիս դպրոցի տարածքում: Հարակից բնակելի և օժանդակ շինությունները գտնվում են նախատեսվող գործունեության տարածքի եզրագծից նորմատիվներով սահմանված և ավել հեռավորության վրա (տե՛ս հավելված 2-ը՝ տարածքի իրադրային սխեման): Նախատեսվող շինությունից մինչև ամենամոտ շինության հեռավորությունը կազմում է 43.670 մ: Գերեզմանատունը գտնվում է 150.527 մ հեռավորության վրա:

Տարածքի և հարակից տարածքների առկա վիճակը, ճանապարհները և հիմնական օբյեկտների տեղադրությունը ներկայացված են հաշվետվությանը կից իրադրային հատակագծում:

5.2 Շրջակա միջավայրի բնութագրերը

5.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

Հետազոտվող տեղամասը տեղակայված է ՀՀ Արմավիրի մարզի Ոսկեհատ բնակավայրում: Գյուղը տեղակայված է Միջնարաքսյան հարթավայրում, ծովի մակարդակից ունի 940 մ բարձրություն: Բնակավայրն ունի գլխավոր ճանապարհի դեպի մայրաքաղաք Երևան: Այն միացված է Երևանին հարակից գյուղերով, իսկ Ոսկեհատից դեպի Երևան մայրուղին կազմում է մոտ 22կմ: Բնակավայրը մարզկենտրոն Արմավիրից գտնվում է 25 կմ հեռավորության վրա, իսկ Զվարթնոց միջազգային օդանավակայանից՝ ընդամենը 7 կմ հեռավորության վրա: Ոսկեհատի տեղանքի ռելիեֆը բացարձակ հարթ է, չունի կտրուկ բարձրություններ կամ ձորեր և թույլ թեքված է դեպի հարավ-արևմուտք: **Գեոմորֆոլոգիական** տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղակայված է Արարատյան հարթավայրի սահմաններում, նրա հյուսիս արևմտյան մասում: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակարդակից 865,4-866,3 մետրերի սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը՝ կախված երկրաբանական կտրվածքից, համարվում է մթնոլորտային տեղումների ինֆիլտրացիոն գոտի: Ստորերկրյա ջրերը բեռնաթաձվում են Արաքս գետը: Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են: Տեղամասում փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր բացահայտվել են 4.90մ-ից:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

5.2.2. Մեյամիկա և երկրաբանություն

Երկրաբանական կառուցվածքը. Ուսումնասիրության ենթակա ենթաշրջանի սահմաններում տարածված ամենահին բնահող-ապարները ատորին չորորդականի և պալեոգենի հասակի լճային, լճա-ալյուվիալ և հրաբխային գոյացումներն են, որոնց գումարային հզորությունը 300-400 մ է:

Վերնաշերտերում ամենալայն տարածքում մունեցող բնահողերը ներկայացված են գետա-լճային ծագման ավազա-կավային նստվածքներով, որոնք տարբեր հորիզոնների վրա շերտադասվում են ավազա-կոպճա-ճալաքարային ջրատար շերտերով:

Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է հորատման եղանակով, արխիվային նյութերի համդրմամբ, գրունտների լաբորատոր հետազոտությամբ: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների երկու շերտեր: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

Շերտ 1. Ավազակավեր շագանակագույն, թույլ և միջին խոնավ, պինդ թանձրությամբ, խճի ու մանրախճի մինչև 20-25% պարունակությամբ, թեթև փոշենման մասնիկների պարունակությամբ, մանրահատիկ, հոծ: Էյրովիալ-դեյրովիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՄՆԻՊ IV-2-84-ի (33գ) III կարգ է:

Շերտ 2. Ալյուվիալ ծագման լավ գնդավորված ճալաքարա-կոպճային նստվածքներ, տեղ-տեղ գերխոնավ, 10-15% գլաքարով, թեթև, ավազային ենթաշերտով, մոտ 20% ավազալավի լցանյութով: Բեկորային նյութը տարակազմ է, լավ և միջին հղկվածության: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՄՆԻՊ IV-2-84-ի (6գ) IV կարգ է:

Սեյսմա-տեկտոնական տեսակետից հետազոտվող տեղամասը գտնվում է Արարատյան դաշտում՝ Միջին-Արաքսյան ճկվածքում և ներկայացված է հզոր միոցենային նստվածքներով: Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.3g$ արագացմամբ:

5.2.3. Կլիմա և օդային ավազան

Ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքին մոտ, ուստի բերում ենք դրան համապատասխան կլիմայական ցուցանիշները: Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի, միջին ամսական ջերմաստիճանը 25°C է, իսկ միջին տարեկան հարաբերական խոնավորությունը 60% (ժ. 15-ին), լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը $3,7^{\circ}\text{C}$ է, թույլ քամիները 2-3 մ/վրկ արագությամբ: Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Էջմիածին և Զվարթնոց օդերևութաբանական կայանների դիտարկումների:

Աղյուսակ 1. Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Էջմիածին	853	-3.7	-1.2	5.1	12.2	17.1	21.2	25.2	25.1	20.1	13.0	6.1	-0.4	11.7	-31	41

Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավություն

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Զվարթնոց	81	76	64	57	58	50	47	46	50	63	74	82	62	67	30

Աղյուսակ 3. Մթնոլորտային տեղումներ

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը												Չյան ծածկույթը			
	Ըստ ամիսների												տարեկան	տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	XI	XII				
Էջմիածին	<u>18</u> 14	<u>20</u> 22	<u>26</u> 25	<u>37</u> 26	<u>45</u> 29	<u>26</u> 46	<u>15</u> 34	<u>10</u> 25	<u>10</u> 27	<u>25</u> 25	<u>24</u> 46	<u>18</u> <u>18</u>	<u>274</u> 46	48	44	-

Աղյուսակ 4 Քամի

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
17. Երևան 18. 19. «Չվարթնոց»	հունվար	14	22	8	9	15	13	12	7	66	0.8	Հվ	2.7	ՀսԱրլ	2.8
		2.2	2.8	2.3	2.6	2.4	2.2	2.7	2.4						
	ապրիլ	11	25	10	13	17	10	9	5	21	2.7				
		3.5	3.7	3.1	3.8	3.2	3.5	4.2	3.3						
	հուլիս	17	31	8	11	16	8	5	4	16	3.8				
		6.4	6.5	3.1	2.9	2.7	2.8	3.0	3.5						
	հոկտեմբեր	13	27	10	12	17	9	7	5	41	1.6				
		2.9	3.2	2.6	2.7	2.5	2.6	3.2	2.7						

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից: Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Վաղարշապատ համայնքում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ տեղադրված չեն և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ հրապարակված տվյալներ չկան:

Բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին որոշակի պատկերացում կարելի է կազմել հաշվարկային եղանակով՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկությունների հիման վրա: Ոսկեհատ համայնքի բնակչության թիվը 2850 է, ըստ այդմ օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են,

- փոշի՝ 0.071 մգ/մ³
- ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ
- ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ³
- ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³:

Մթնոլորտ արտանետվող նյութերի հաշվարկ

Շինարարական տեխնիկայի տեղաշարժը գրունտային ճանապարհով ուղեկցվում է փոշու արտանետմամբ, ինչն առաջանում է անվադողերի և գրունտային մակերեսի շփման արդյունքում, գրունտի, շինանյութերի, շինարարական աղբի տեղափոխման, դատարկման աշխատանքների ժամանակ: Շինհրապարակում անօրգանական փոշու արտանետման առավելագույն սահմանաչափը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{C_1 \times C_2 \times C_3 \times K_5 \times N \times L \times C_7 \times q_1}{3600} + C_4 \times C_5 \times K_5 \times q_1^2 \times S \times n, \text{ գ/վրկ}$$

$$M_{\text{տարի}} = 0.0864 \times M_{\text{վրկ}} \times (365 - (T_{\text{сн}} + T_{\text{д}})), \text{ տ/տարի}$$

Որտեղ,

C₁ – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի միջին բեռունանկությունը

C₂ – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին արագությունը

C₃ – գործակից, որը հաշվի է առնում ճանապարհների վիճակը

K₅ – գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը

N – ամբողջ տրանսպորտի վազքընթացների թիվն է ժամում

L – մի վազքի միջին երկարությունն է

C₇ – գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանետվող փոշու բաժնեմասը

q₁ – 1 կմ վազքի դեպքում փոշու արտանետումները մթնոլորտ

C₄ – գործակից, որը հաշվի է առնում պլատֆորմի մակերեսի նյութի պրոֆիլը

C₅ – գործակից, որը հաշվի է առնում նյութի շրջափչման արագությունը

K₅ – գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը

q₁² – նյութի փաստացի մակերևույթի միավորից փոշու արտանետումները

S – պլատֆորմայի միջին մակերեսն է ,

n – ավտոմեքենաների թիվն է

T_{сн} – ձնածածկ օրերի թիվն է

Тд – անձրևային օրերի թիվն է

Կատարվող աշխատանքի բնույթը	C ₁	C ₂	C ₃	N	L	C ₇	q ₁	C ₄	C ₅	K ₅	q ₁ ²	S	n	M, տ/տարի	Q, գ/վրկ
Մեքենաների շարժը	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0,002	15	7	0.03303	0.002730683
Գրունտի հանույթը	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0.002	7	2	0.004411	0.000364683
Գրունտի հետլիցք	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0.002	7	2	0.004411	0.000364683
Ավազի շերտի լիցք	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0.002	8	1	0.002524	0.000208683
Խճի շերտի լիցք ըստ ֆրակցիաների	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,6	1.0	0,01	0.002	8	1	0.003105	0.000256683
Ամրացման աշխատանքներ	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0.002	6	2	0.003782	0.000312683

Արտանետումների վերջնական տարբերակը ներկայացվում է Աղյուսակ 5-ում

Աղյուսակ 5.

Աշխատանքի բնույթը	M, տ/տարի	Q, գ/վրկ
Մեքենաների շարժը փոշի՝ 70-20% SiO ₂)	0.03303	0.002730683
Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO ₂)	0.004411	0.000364683
Գրունտի հետլիցք՝ 70-20% SiO ₂)	0.004411	0.000364683
Ավազի շերտի լիցք փոշի՝ 70-20% SiO ₂)	0.002524	0.000208683
Խճի շերտի լիցք ըստ ֆրակցիաների փոշի՝ 70-20% SiO ₂)	0.003105	0.000256683
Ամրացման աշխատանքներ փոշի՝ 70-20% SiO ₂)	0.003782	0.000312683
Արտանետվող փոշու ընդհանուր քանակը	0.0042381	0.051264

Փորման աշխատանքների իրականացման արդյունքում արտանետվելու է անօրգանական փոշի՝ 20-70% SiO₂ պարունակությամբ: Նախատեսվող գործունեության նախագծային տվյալների համաձայն գրունտի հանույթի համար օգտագործվելու է 1 էքսկավատոր՝ համապատասխանաբար 1.6մ³ աշխատանքային շերեփի տարողությամբ: Ելնելով գործող մեթոդակարգից՝ արտանետվող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{P1 \times P2 \times P3 \times P4 \times P5 \times P6 \times B1 \times G \times 10^6}{3600} \text{ գ/վրկ}$$

P1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0,04

P2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.2

P4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.01

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B1 - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G վերամշակվող գրունտի քանակն ըստ աշխատանքային շերեփի տարողության՝ 16տ/ժ Այսպիսով,

$$Q = \frac{0,04 \times 0,02 \times 1,2 \times 0,01 \times 0,5 \times 1 \times 0,5 \times 8 \times 10^6}{3600} = 0,0053 \text{ գ/վրկ}$$

Մեկանգամյա համախառն արտանետումը (70-20% SiO₂) .

M=0,0036 x 0,0053 x 72 = 0,001տ/շինժամ

Բեռնման – բեռնաթափման աշխատանքների իրականացման արդյունքում առաջացող փոշու հաշվարկն իրականացվել է գործող մեթոդակարգի համաձայն: Թափքի բեռնաթափման աշխատանքներն իրականացվում են ուղղահայաց՝ առանց թևքի

կիրառման: Բեռնաթափվում է ավագ և խիճ, ինչից առաջացող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M = \frac{K1 \cdot K2 \cdot K3 \cdot K4 \cdot K5 \cdot K7 \cdot K8 \cdot K9 \cdot B \cdot G \cdot 10^6}{3600} \cdot (1 - \eta), \text{ գ/վրկ}$$

K1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է,
 K2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում,
 K3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը,
 K4 – գործակից, որը հաշվի է առնում տեղի պայմանները, տեղափոխման և փոշեառաջացման պայմանները,
 K5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը,
 K7 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը,
 K8 – ուղղման գործակից տարբեր նյութերի համար՝ կախված ճանկաշերտի տեսակից
 K9 – ավտոինքնաթափի համախառն բեռնաթափման ուղղման գործակից
 B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը,
 G – նյութի վերամշակման գումարային քանակը 1 ժամվա հաշվով, տ/ժ
 η - փոշենստեցման արդյունավետության հարաբերակցությունը մեկ միավորի հաշվով
Արտանետվող փոշու տարեկան քանակը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$M_{\text{տ}} = K1 \cdot K2 \cdot K3 \cdot K4 \cdot K5 \cdot K7 \cdot K8 \cdot K9 \cdot B \cdot G_{\text{տ}}, \text{ տ/տ}$$

где $G_{\text{տ}}$ – վերամշակվող նյութի գումարային ծավալն է շինարարության ողջ ժամանակատվածի համար

Ավագ

$$M = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,2 \cdot 0,21 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 6 \cdot 10^6 / 3600 \cdot 0,15 = 0,000945 \text{ գ/վրկ}$$

$$M_{\text{տ}} = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,5 \cdot 0,4 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 422 = 0,0076 \text{ տ/տարի}$$

Խիճ

$$M = 0,04 \cdot 0,02 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,8 \cdot 0,41 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 6 \cdot 10^6 / 3600 \cdot 0,15 = 0,004 \text{ գ/վրկ};$$

$$M_{\text{տ}} = 0,04 \cdot 0,02 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,8 \cdot 0,4 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 755 = 0,0116 \text{ տ/տարի}$$

Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի բնութագիրը բեռնման –բեռնաթափման աշխատանքներից

Աղյուսակ 6.

Արտանետվող նյութ	Առավելագույն միանվագ, գ/վրկ	Տարեկան արտանետում տ/տ
Անօրգանական փոշի >70%	0,000945	0,0076
Անօրգանական փոշի 20-70%	0,004	0,0116

Ճանապարհի, մայրերի և շենքերի կառուցման ժամանակ աշխատող

դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող ընդհանուր գազերի և վնասակար նյութերի հաշվարկն իրականացվել է համաձայն գործող մեթոդակարգի: Հաշվարկի բանաձևը արտանետվող գազերի ընդհանուր ծավալի համար իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$G_4 \cdot q_i \cdot n \cdot 10^3$$

$$M' = \frac{G_4 \cdot q_i \cdot n \cdot 10^3}{3600}$$

$$3600$$

Որտեղ, G_4 – դիզ. վառելիքի ժամային ծախսն է

q_i – i-րդ աղտոտող նյութի սահմանային ցուցիչն է՝ տ/վ

n – շինհրապարակում միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է:

Հետևաբար,

$$G_4 \cdot q_i \cdot n \cdot 10^3$$

$$M' = \frac{0.026 \cdot 0.084 \cdot 3 \cdot 10^3}{3600} = 0,0018 \text{ մ}^3 \text{ գազային արտանետման ծավալն է:}$$

$$3600$$

Դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող վնասակար նյութերի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$k$$

$$G_i = \sum_{k=1} (m_{U\theta U_i} \cdot t_{U\theta U} + 1,3 \cdot m_{U\theta U_{ik}} \cdot t_{U\theta U_k}) \cdot N_k / 1800, \text{ ր/с}$$

որտեղ $m_{U\theta U_i}$ – i-րդ նյութի սահմանային արտանետումն է չծանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$1,3 \cdot m_{U\theta U_{ik}}$ – i-րդ նյութի սահմանային արտանետումն է ծանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$t_{U\theta U}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ չծանրաբեռնված ր.

$t_{U\theta U_k}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ ծանրաբեռնված ր.

N_k – k-րդ խմբի մեքենաների վ միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է

i-րդ նյութի համախառն արտահանման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$k$$

$$M_i = \sum_{k=1} (m_{U\theta U_i} \cdot t_{U\theta U} + 1,3 \cdot m_{U\theta U_{ik}} \cdot t_{U\theta U_k}) \cdot 10^{-6}, \text{ տ/տարի}$$

Շինմեքենաների անվանացանկ	Քանակը	Մեկ մեքենայի միջին աշխատաժամանակը							Աշխատանքային օրերի թիվը	Միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվը
		Օր/ժ				30ր/ր				
		ընդամենը	չճանրաբեռնված	ճանրաբեռնված	Ազատ ընթացք	չճանրաբեռնված	ճանրաբեռնված	Ազատ ընթացք		
Մոբիլային ավտոկրունկ	1 (2)	3	1,392	1,508	0,58	12	13	5	225	+
Էքսկավատոր շերեփ. տարող. 1.6մ3	1 (1)	2	2,875	3,2	1,3	12	13	5	110	+
Բուլդոզեր	1 (3)	2	2,875	3,2	1,3	12	13	5	110	+
Գլդոն	1 (3)	2	2,4	2,6	1	12	13	5	320	+
ջրցան մեքենա	1 (1)	2	1,392	2,63033	1,01167	12	13	5	320	+

Ասֆալտբետոնի աշխատանքներից արտանետվող նյութի քանակական և որակական ցուցանիշներ

Արտանետվող նյութի անվանումը	Առավելագույն արտանետում գ/վրկ	Համախառն արտանետում տ/տ
Ածխաջրածին C12-C19	0.0000399	0,0977

Ամրակցման աշխատանքների ժամանակ օգտագործվող նյութերի և ներկանյութերի համար հաշվարկն իրականացվում է համաձայն հետևյալ բանաձևի.

$$\Pi = 10^{-3} \cdot mk \cdot (\delta a / 100) \cdot (1 - fp / 100) \cdot K, \text{ տ/տարի}$$

Որտեղ,

mk – օգտագործվող ներկանյութի քանակն է, կգ

δa – ներկի բաժնեմասն է, որը կորում է աէրոզոլի տեսքով, %;

fp – լուծիչ, %;

K – աէրոզոլի տեսքով ներկանյութի նստեցման գործակիցն է,

$$\Pi_1 = 10^{-3} \cdot mk \cdot fp \cdot \delta' p / 10^4, \text{ տ/տարի}$$

Որտեղ,

fp – նյութի օքսիդացման չափաբաժինն է

$\delta' p$ – լուծիչի գոլորշիացման մասնաբաժինն է, որն առաջանում չորանալուց:

Հետևաբար ամրակցման աշխատանքների ժամանակ արտանետվող նյութերի քանակն ըստ տեսակի որոշվում է հետևյալ բանաձևով.

$$G = \frac{\Pi' \cdot 10^6}{n \cdot t \cdot 3600}, \text{ գ/վրկ}$$

որտեղ,

Π' – ամրակցման ընթացքում օգտագործվող նյութերի բաժնեմասն է, մեկ ամիս անընդմեջ աշխատելու պարագայում

n – մեկ ամսվա կտրվածքով օգտագործվող նյութերով աշխատելու անընդմեջ օրերի քանակն է

t – օրվա մեջ ներկանյութ օգտագործելու միջին ժամային քանակն է:

Այսպիսով,

$$\Pi = 10^{-3} \cdot 20,05 \cdot (30/100) \cdot (1 - 45/100) \cdot 1 = 0,003308 \text{ տ/տարի}$$

$$G = 0,003308 \cdot 10^6 / (10 \cdot 6 \cdot 3600) = 0,015316 \text{ գ/վրկ}$$

$$\Pi = 0,003308 \cdot 1 = 0,003308 \text{ տ/տարի}$$

$$G = 0,015316 \cdot 1 = 0,0015316 \text{ գ/վրկ}$$

$$\Pi = 10^{-3} \cdot 20,05 \cdot (45 \cdot 25 / 10^4) = 0,002256 \text{ տ/տարի}$$

$$\Pi_1 = 10^{-3} \cdot 20,05 \cdot (45 \cdot 75 / 10^4) = 0,006767 \text{ տ/տարի}$$

$$\Pi = 0,002256 + 0,006767 = 0,009023 \text{ տ/տարի}$$

$$\Pi = 0,009023 \cdot 0,5 = 0,004511 \text{ տ/տարի}$$

$$G = 0,002256 \cdot 0,5 = 0,001128$$

Այսպիսով, արտանետվող նյութերի տեսակային և քանակական տվյալները ներկայացվում են Աղյուսակ 7-ում

Աղտոտող անվանումը	նյութի	Առավելագույն արտանետում գ/վրկ	Տարեկան արտանետում տ/տ
Դիմեթիլբենզոլ		0,001128	0,004511
Կախյալ մասնիկներ		0,0015316	0,002256

5.2.4. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N 75-Ն որոշմամբ Հայաստանում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների կառավարումը կատարվում է 6 ջրավազանային կառավարման տարածքների միջոցով: Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 6 ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսների 151 դիտակետ:

Վաղարշապատ համայնքը գտնվում է Մեծամոր գետի ջրահավաք ավազանում, որը ներառված է Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում (ՋՏԿ):

Համաձայն 2024 թ. առաջին եռմասյակի շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ տեղեկագրում բերված տվյալների, 2024 թ.-ին Ախուրյանի ՋՏԿ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվում է 11 դիտակետում:

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս), Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք փետրվարին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև ջրի որակը փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս):

5.2.5. Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած, կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային, պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Համաձայն ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված տվյալների, հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թ. հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն: 2024 թվականին հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Վայոց ձորի մարզի Զանգակատուն (Սովետաշենի), Վերնաշենի

և Գլաձորի տեղամասերում, Կոտայքի մարզի Հանքավանի պղնձամոլիբդենային հանքավայրում, Սյունիքի մարզի Ողջիի փակված պոչամբարում, ինչպես նաև Տավուշի մարզում: n

Կառուցապատման ենթակա տարածքը հանդիսանում է Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի Մ. Մաշտոցի անվան հիմնական դպրոցին անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված գույք: Հողամասն՝ ըստ նպատակային նշանակության բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

5.2.6. Կենսաբազմազանություն

Վաղարշապատ համայնքի տարածքը պատկանում է Երևանի ֆլորիստիկ շրջանին՝ գտնվելով անապատա-կիսաանապատային գոտում: Կիսաանապատային գոտին աչքի է ընկնում իր բազմազանությամբ, սակայն կերհանդակները ներկայացված են օշինդրային, օշինդրա-էֆեմերային, օշինդրա-հացազգային, օշինդրա-օշանային և օշանային բուսական համակեցություններով: Ուտելի և համեմունքային բույսերից կարելի է նշել բոխին, շրեշր, շուշանը, դանձիլը: Եթերայուղատու բույսերից են ուրցը, անթառամը, օշինդրը: Բնական խեժով հարուստ են հատկապես տրագականտային գազերը: Որսի օբյեկտ են համարվում լորը, քարիկաքավը, մի շարք ջրլողոչուններ /սևփարփար, մեծուզակ, փոքրսուզակ, կոնչան բադ, մոխրագույն բադ և այլն: Մարզի բուսականության առավել տարածված տեսակներից են կիսաանապատային, տափաստանային տեսակները, որոնք զբաղեցնում են տարածքի հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան մասերը: Մարզի կլիմայական պայմանները թույլ են տալիս այդ հողերի վրա աճեցնել տեխնիկական, այգեգործական և մերձարևադարձային, ինչպես նաև հացահատիկային կուլտուրաներ:

Բուսական աշխարհ: Արմավիր մարզի դիտարկվող տարածաշրջանում գերակշռում են անապատային չորասեր բուսականության բնորոշ բուսատեսակները՝ շորան, բալախը, սարսազան, որոնք դիմանում են աղակալմանը, ինչպես նաև հալոֆիտային, հալոքսեոֆիտանապատային բուսականությունը - *Salsola eticoides*, *S. dendroides*, *S. nitraria*, *Haiocnemumstrobilaceum*: Օշինդրա-էֆեմերային կիսաանապատային բուսականությունից հանդիպում են *Artemisia fragrans*, *Kochiaprostrata*, *Capparis herbacea*, *Ceratoides papposa*, *Atraphaxi sspinososa*, *Rhamnus paiiasii*, *Tanacetum argyrophyllum*, *Poa bulbosa*, տեսակներ - *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*: Կիսաանապատային գոտու համար բնորոշ բուսատեսակներից են՝ օշինդր բուրավետը, օշան գորշ, օշան հավամբգանման, գեղաճնկիկ մատիտեղանման, լերդախոտ ալեհեր, ավելաբույս գետնատարած: Հազվագյուտ և անհետացող գիպսոֆիտ անապատային բուսական ֆորմացիաներ՝ *Cephalorrhynchustakhtadzhianii*, *Zygophyllumatriplicoides*: Մարզի տարածաշրջանին բնորոշ են՝ կտավատազգիները (*Linaceae*), մեխակազգիները (*Caryophyllaceae*): Ֆլորիստիկ շրջանում հանդիպում են նաև. «*Salsola ericoides*», «*Kochia prostrata*», «*Atraphaxi spinosa*», «*Rhamnus pallasii*», *Euphorbiaceae* ընտանիքի էնդեմիկ տեսակը՝ «*Euphorbia vedica*»՝ իշակաթնուկ վեղիի:

Մարզի տարածքում հանդիպող և անհետացման եզրին գտնվող բուսատեսակների վերաբերյալ տեղեկատվությունը բերված է ՀՀ կառավարության 2010 թ. հունվարի 29-ի N72-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բույսերի Կարմիր գրքում:

Նախատեսվող գործունեության տարածքում հանդիպում է ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված՝ Կալախոտ կասպիական (*Kalidium caspicum*) տեսակը: Նշված տեսակի հանդիպման դեպքում գործունեություն իրականացնողները պարտավոր են առաջնորդվել Կառավարության 2014 թվականի հուլիսի 14-ի N781-Ն որոշման դրույթներով:

Կենդանական աշխարհ: Արմավիրի մազը հարուստ է կիսաանապատային գոտուն բնորոշ սողուններով, ինչպիսին են միջերկրածովային կրիան /Testudograeca/, օձագլուխ մողեսը /Ophisopselegans/, Շտրաուխի /Eremiasstrauchi/ և Անդրկովկասյան /E. pleskei/ մողեսիկները, Անդրկովկասիան թափրային կյորագլուխը /Phrynocephalushelioscopus-persicus/, մոլեսաօձը /Malpolonmonspessulannus/, վզնոցավոր /Eireniscollaris / և հայկական /E.punctatolineatus/ էրենիսները. կարմրափոր սահնօձ կամշահմարը /Coluberschmidt/ և կապարագույն սահնձը /C.nummifer/, Անդրկովկասյան գյուրգան /Viperalebetina/, կրծողներից՝ սովորական /Microtusarvalis/ և հասարակական /M. socialis/ դաշտամկները, հարավային /Merionesmeridianus/, փոքրասիական /M. blackleri/ և Վինոգրադովի /M. vinogradovi/ ավազամկները, կատվազգիներից՝ եղեգնակատուն /Felischaus/: Ջրաճահճային էկոհամակարգերում հանդիպում են Կասպիական կրիան /Mauremiscaspica/ և լճագորտը /Ranaridibunda/: Համայնքային տարածքներում հանդիպում են ամենուր ողնաշարավորներից՝ լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակ դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշարավորներից՝ անձրևորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, փայտօջիկ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր: Կենդանիների էնդեմիկ տեսակներն են՝ հայկական մկնիկը, կովկասյան տարավոնը:

Բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել Վաղարշապատի N11 հիմնական դպրոցի հողատարածքի սահմաններում, որը տեղակայված է արդեն իսկ յուրացված և զարգացած համայնքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու պատճառով:

5.2.7. Հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ

ՀՀ Արմավիրի մարզում գտնվում է «Որդան կարմիր» արգելավայրը, որը էջմիածին քաղաքից գտնվում է մոտ 18կմ հեռավորության վրա:

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն Արմավիրի մարզում առկա են անձնագրված 3 բնության հուշարձան: Մարզի բնության հուշարձանների ցանկը ներկայացվում է Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 9.Բնության հուշարձաններ

Ջրագրական հուշարձաններ		
5.	«Մեծամոր» լիճ	Արմավիրի մարզ, Տարոնիկ գյուղից մոտ 3 կմ հս-արմ
Կենսաբանական հուշարձան		
2.	«Ավազասեր (պսամոֆիլ) բուսականություն»	Արմավիրի մարզ, քաղ. Վաղարշապատ, Զվարթնոց տաճարի մոտ
3.	«Ջրաճահճային բուսականություն»	Արմավիրի մարզ, Մեծամոր լիճ

«Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման համաձայն գործունեության տարածքում և դրան հարակից տարածքներում բացակայում են

երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական հուշարձանները:

5.2.8. Պատմամշակութային հուշարձաններ

Ոսկեհատ բնակավայրի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում ներառված են հուշարձաններ, այդ թվում՝ 19-րդ դարի Սուրբ Սարգիս եկեղեցին, մ.թ.ա. 2-1-ին հազարամյակների դամբարանադաշտը, ինչպես նաև ուշ միջնադարյան խաչքարերն ու տապանաքարերը, սակայն բոլոր հուշարձանները գտնվում են նախատեսվող գործունեության տարածքից նորմատիվներով սահմանված և ավել հեռավորության վրա: Ոսկեհատ բնակավայրի Մ. Մաշտոցի անվան դպրոցի տեղամասի տեղագնության ընթացքում հուշարձաններ չեն հայտնաբերվել: Տարածքում հնագիտական շերտերի առկայությունը բացառվում է, հաշվի առնելով, որ ներկայիս դպրոցի տարածքը կառուցապատված է տարածք է: Կառուցապատվող տարածքում հնագիտական ուսումնասիրությունները, համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի (11.11.1998թ.) հոդված 24-ի դրույթների, չեն պահանջվում:

5.2.9. Սոցիալ-տնտեսական հարցեր

Ոսկեհատ համայնքը տեղակայված է Միջինարաքսյան հարթավայրում, ծովի մակարդակից ունի 940 մ բարձրություն: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 28 կմ: Նախկինում ունեցել է Սովխոզ N4, Ոսկեհատի ուսումնական տնտեսություն անվանումները: Ոսկեհատ է վերանվանվել 1978 թ-ին: Այստեղ է գտնվում գյուղատնտեսական ակադեմիայի ուսումնական տնտեսությունը: Գյուղն ունի 753 առկա տնտեսություն: Գյուղի բնակչության մեծ մասը հայրենադարձներ են, ինչպես նաև Հայաստանի տարբեր շրջաններից տեղափոխվածներ: Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (433 հա), կան պտղատու (3 հա) և խաղողի այգիներ (15 հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, բազմամյա տնկարկներ՝ կազմելով համապատասխանաբար 111, 17.9, 18.1 հեկտար: Զբաղվում են պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ, թռչնաբուծությամբ, անասնապահությամբ: Ունի դպրոց, մանկապարտեզ, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈԽԼԵՐՈՒՄ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրում: Դպրոցի նոր մասնաշենքերը

նախատեսվում է կառուցել ներկայիս դպրոցի տարածքում: Դպրոցի գործող բոլոր մասնաշենքերը ապամոնտաժվելու են նոր դպրոցի կառուցումից հետո՝ համաձայն տեխնիկական առաջադրանքի: Հողամասի մակերեսը կազմում է 31 767,4 մ², համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի (կադաստրային ծածկագիր՝ 04-081-0030-0039): Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական վկայականը ներկայացված է հավելված 1-ում: Նոր կառուցվող դպրոցի կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է 4971մ²: Այն նախատեսված է 432 աշակերտների համար և բաղկացած է 2 մասնաշենքերից:

Նախագծային լուծումներն իրականացվել են հիմնվելով ՀՀ գործող նորմերի վրա, մասնավորապես.

- ՀՀՇՆ 31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր»
- ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար»
- ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»
- ՀՀՇՆ VI 13.102-99 «Բետոնյա և երկաթբետոնյան կոնստրուկցիաներ»
- ՀՀ Առողջապահության նախարարի 20 դեկտեմբերի 2002թ. N857 հրաման «Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) N2.III.1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու» մասին
- ՀՀ Քաղաքաշինության նախարարի 24 մարտի 2016թ. N49-Ն հրաման «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030թթ. ծրագրի շրջանակներում իրականացվող դպրոցական շենքերի ուժեղացման և նորի կառուցման համար Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերով թույլատրելի առավել բարձր պահանջներ և պայմաններ կիրառելու» մասին
- ՇՈՒՍ 2.01.07-85 «Բեռնվածքներ և ազդեցություններ»
- ՇՈՒՍ 2.03.11-85 «Շինարարական կոնստրուկցիաների պաշտպանություն կորոզիայից»
- ՇՈՒՍ 12-01-2004 «Շինարարության կազմակերպում»
- Սեյսմակայուն շինարարության նորմեր,
- Այլ նորմեր և կարգավորումներ:

6.1. Շահագործման փուլ

Ըստ նախագծի նախատեսվում է կառուցել երկհարկ դպրոց: Բացի երկու հարկերը, դպրոցն ունի նաև նկուղային մեկ հարկ՝ 3.3մ բարձրությամբ և 620 ք.մ մակերեսով, որը ծառայելու է նաև որպես ժամանակավոր թաքստոց: Նկուղային հարկում նախատեսվում են սպասարկման սենյակներ, սանհանգույցներ: Նկուղային հարկը ծառայելու է որպես ժամանակավոր ապաստարան: Շենքի ծավալում նախատեսվում է ունենալ 2 փակ ներքին բակ՝ ապակե ծածկի տակ՝ լրացուցիչ ռեկրեացիոն գոտիներին լուսավորություն ապահովելու համար:

Առաջին հարկ. այստեղ տեղակայված են I-V դասարանների 2-ական դասասենյակներ, նախադպրոցական դասասենյակը, գրադարանը, համակարգչային տեխնիկայի կաբինետը, ռազմագիտության կաբինետը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներն՝ իրենց ընդունարանով, աշխատանքի ուսուցման կաբինետը, բժշկի սենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, սպորտդահլիճը՝ իրեն կից հանդերձարաններով և մարզչի սենյակով, ճաշարանը և խոհանոցը, ինչպես նաև 3 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ ու տարածքներ:

Նախատեսված է նաև սանհանգույց հաշմանդամություն ունեցող անձանց համար: Մուտքային գոտուն կից տեղակայված են հաշմանդամների համար նախատեսված ուղղահայաց ամբարձիչը, ծնողների սպասասրահը, ինչպես նաև երկրորդ հարկի հետ կապ ստեղծող ամֆիթատրոնը:

Երկրորդ հարկ. այս հարկում տեղակայված են VI-XII դասարանների դասասենյակները, լեզվի երկու կաբինետները, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, ռեսուրսային կենտրոնը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, կենսաբանության և քիմիայի մասնագիտացված լսարանն՝ իրեն կից լաբորատորիայով, ֆիզիկայի մասնագիտացված լսարանն՝ իրեն կից լաբորատորիայով, հանդիսությունների դահլիճն՝ իրեն սպասարկող սենյակների խմբով, 4 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Այս հարկում առկա են նաև պատշգամբներ:

Հատակագծում դպրոցն ունի ուղղանկյուն եզրագիծ և կարանով բաժանված է երկու մասնաշենքերի: Նոր դպրոցը նախատեսվում է կառուցել միաձույլ երկաթբետոն կրող կոնստրուկցիաներով, ներառյալ՝ հիմքերը, պուները, հեծանները և միջհարկային սալերը: Արտաքին պատերում նույնպես օգտագործվելու են ե/բ կոնստրուկտիվ լուծումներ: Միջնորմերը նախատեսված են 200x400x200 թեթև բետոնի բլոկներից՝ համապատասխան ամրանավորմամբ: Միջանցքների առանցքային չափը կազմում է 3.5 մ՝ որոշ տեղամասերի լայնացումներով: Դասասենյակներն ունեն 7մx7մ առանցքային չափեր, իսկ դրանց միջին մակերեսը կազմում է 48 մ²:

Առաջին հարկի բարձրությունը 3.3 մ է: Երկրորդ հարկի բարձրությունը փոփոխական է՝ ստորին մասում կազմում է 3.0 մ ծածկի տակ:

Սպորտդահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ 7.8 մ է, իսկ հանդիսությունների դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ 4.5 մ է:

Դպրոցի բակային տարածքը բարեկարգվելու է և այստեղ նախատեսված է բաց մարզադաշտ, բաց մարզահրապարակ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ:

Ըստ նախագծի՝ շինության ներքին սենքերը հարդարվում են գաջե սվաղով և ներկվում լատեքսային ներկով:

Նկուղային հարկի, սանհանգույցների, խոհանոցային սենքերի և տեխնիկական այլ սենքերի պատերը ենթակա են Ց/Ա սվաղման՝ հետագա ներկումով կամ սալիկապատմամբ: Պատշգամբների ստորին հատվածում իրականացվող կախովի առաստաղները ֆիբրոբետոնից են, իսկ ներքին սենքերում և առաստաղներում կիրառված գիպսեստվաթաթուղթը ջրակայուն է:

Հատակների հարդարման մեջ օգտագործվում են կերամոգրանիտ, վինիլ և սպորտային վինիլ: Բոլոր ճաղերը մետաղական են, ենթակա են երկտակ ներկման մետաղական հակակոռոզիոն ներկով: Պատերի շրջանաձև բացվածքների հաստությունը իրականացվում է ց/ա սվաղով և տրավերտինի երանգի ֆասադային ներկով: Կենտրոնական մուտքի աջ կողմում նախատեսված է ցայտաղբյուր:

Արտաքին պատուհանների և դռների պրոֆիլները նախատեսված են ալյումինե, ջերմային կամրջակով, ապակեփաթեթի ներքին շերտը՝ էներգախնայող: Ներքին վիտրաժները ալյումինե շրջանակներով են՝ առանց ջերմային կամրջակի: Երդիկների ապակիները 1 շերտը թրծված ապակուց են, ներքին շերտը տրիպլեքս՝ համալրված օդափոխության համակարգով՝ ջերմոցային էֆֆեկտը կանխելու նպատակով:

Համաձայն նախագծի կաթսայատունը նախագծվել է 432 հոգանոց դպրոցի սպասարկման համար: Շինությունը 1 հարկանի է, հատակագծում ունի 6մ x 9մ առանցքային չափեր: Արտաքին պատերը նախատեսվում են իրականացվել 2 շարք 200մմ-անոց բետոնե

բլոկներով համապատասխան ամրանավորմամբ: Պատերը նախատեսվում է ջերմամեկուսացնել 40մմ XPS տեսակի ջերմամեկուսիչով: Տանիքը միալանջ է, դեպի ետին մաս թեքությամբ: Տանիքի վերին շերտերը նախատեսվում է իրականացնել 2 շերտ փափուկ ջրամեկուսիչով, վերին շերտը պաշտպանիչ ծածկույթով: Ջրահեռացումը ազատ է: Գետնախարսիի երեսպատումը նախատեսվում է իրականացնել 30մմ-անոց բազալտ սալերով, իսկ վերին մասերը 30 մմ-անոց տրավերտինե սալերով: Երեսպատումը իրականացվում է մետաղական ամրանային ցանցի կիրառմամբ: Կաթսայատան դռներն ու պատուհանները նախատեսվում են ալյումինե պրոֆիլներով:

Կաթսայատան սպասարկումը նախատեսվել է ներածման և արտածման օդափոխություն բնական դրոմամբ:

Ջեռուցման ժամանակահատվածում գազի հաշվարկային ժամային ծախսը կազմում է 71 մ³/ժամ, ամռանը՝ 17 մ³/ժամ: Ջեռուցման շրջանում գազի միջին ժամային ծախսը կազմում է 58.9 մ³/ժամ, իսկ միջին օրական ծախսը՝ 1413.6 մ³/օր:

Դպրոցի շենքի տանիքին նախատեսվում է տեղադրել 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված 232 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեւքջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 16 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար:

Ջրահեռացումը նախատեսվում է իրականացնել կազմակերպված: Տանիքների թեքությունը կազմում է 7°, երկշերտ ջրամեկուսիչով՝ վերին շերտը պաշտպանիչ մանրավազով: Տանիքի հարավ նայող լանջին նախատեսվում է տեղադրել արևային մարտկոցներ: Կառույցի արտաքին պատերը իրենցից ներկայացնում են 20 սմ ե/բ կոշտություններ, արտաքին 10 սմ ջերմամեկուսիչ շերտ և 30 մմ հաստությամբ տրավերտինե երեսպատում՝ Յ/Ա շաղախով ամրանային ցանցի վրա:

Աղյուսակ 1-ում ներկայացված են նախագծվող դպրոցի կառուցապատման վերաբերյալ ընդհանուր ցուցանիշները:

Աղյուսակ 10. Կառուցապատման վերաբերյալ ընդհանուր ցուցանիշները

ՑՈՒՑԱՆԻՇԸ	ՄԻԱՎՈՐ	ԾԱՎԱԼ
Դպրոցի նախագծվող տարողունակությունը	աշակերտ	432
Մասնաշենքերի թիվը	հատ	2
Ընդհանուր հողատարածքի մակերես	մ ²	31169
Կառուցապատման մակերես	մ ²	4971
Կանաչապատման գոտու մակերես	մ ²	23820
Անջրանցիկ մակերես	մ ²	2378

Դպրոցը ներկայումս գործող է և հետևաբար ապահովված է էլեկտրամատակարարման, գազամատակարարման, ջրամատակարարման և կոյուղու համակարգերով: Ինժեներական կոմունիկացիաների նախագծերը և սխեմաները նոր կառուցվող դպրոցի համար սկզբունքորեն մնացել են անփոփոխ, սակայն աշխատանքային նախագծում ընդգրկվել են նոր տեխնիկական լուծումներով պայմանավորված որոշակի փոփոխություններ:

Դպրոցի միջանցքներում և սրահներում նախատեսվում են չսայթակող կերամոգրանիտե հատակներ, դասասենյակներում և դահլիճներում՝ վինիլային հատակներ: Դպրոցում նախատեսվում են ալյումինե արտաքին դռներ, վիտրաժներ և

պատուհաններ, իսկ ներքին դռները կլինեն ՄԴՖ տեսակի: Ներքին հարդարման աշխատանքները կիրականացվեն բարձրորակ և էկոլոգիապես մաքուր նյութերից: Նախագծման լուծումներում մեծ ուշադրություն են դարձված հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ խմբերի տեղաշարժին ապահովող և այլ հարմարեցված լուծումներին (թեքահարթակներ, հարմարեցված սանհանգույցներ և այլն): ՀՀՇՆ IV-11.07.01.2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներով նախատեսվել են թեքահարթակներ: Հետևաբար, դպրոցի բոլոր ենթակառուցվածքները կլինեն մատչելի և հասանելի հենաշարժային խնդիրներ ունեցող յուրաքանչյուր աշակերտի համար:

Շենքի տանիքն իրականացված է հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Դպրոցի բոլոր մասնաշենքերն ապահովված կլինեն հակահրդեհային սարքավորումներով և հիդրանտներով, ինչպես նաև էվակուացիոն ելքերով: Բոլոր հարկերում աստիճանավանդակները և էվակուացիոն ելքերը նախատեսված են ըստ գործող նորմերի և ապահովում են սեյսմիկ և հակահրդեհային պահանջները:

Ջրամատակարարում և ջրահեռացում Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների համաձայն: Ջրամատակարարման և ջրահեռացման նախագծի համար հիմք են հանդիսացել նաև ճարտարապետաշինարարական գծագրերը, գլխավոր հատակագիծը, տարածքի ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները: Դպրոցի ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ջրագծից: Նախատեսվում է իրականացնել տաք և սառը ջրամատակարարում, կոյուղու ջրահեռացման ցանց և հակահրդեհային սնուցող ցանց: Նախագծվող շենքի ջրամատակարարման համակարգը սնվում է քաղաքային ջրագծից: Առաջին հարկում նախատեսված են ռեզերվուարներ խմելու ջրի և հրդեհամարման կարիքների համար, յուրաքանչյուրը 10մ³ ծավալով: Ռեզերվուարներ ջուրը պոմպերի միջոցով տրվում է ջրամատակարարման և հրդեհամարման ցանց: Նախատեսված է տեղադրել խմելու ջրի պոմպային կայանք: Պոմպային կայանքը բաղկացած է 4 պոմպերից, որոնցից 2-ը աշխատում են ջրամատակարարման կարիքների համար, մյուս 2-ը միանում են հրդեհի դեպքում: Տաք ջրամատակարարման համակարգը սնվում է կաթսայատնից: Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN10 խողովակներից: Դպրոցի տաք և սառը ջրամատակարարման հաշվարկային ելքերը որոշվել են՝ հաշվի առնելով դպրոցի տեխնոլոգիական պահանջները և սպասարկվող մարդկանց քանակը: Համաձայն գործող շինարարական նորմերի՝ անհրաժեշտ ջրի քանակը (ներառյալ տաք ջուրը) հաշվարկվում է $Q_{max}/վրկ=2.767$ վ/վրկ, իսկ շենքի հրդեհամարման համար անհրաժեշտ ջրի քանակությունը՝ 2.5լ/վրկ (2 շիթ): Հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

Կենցաղային կոյուղու համակարգը մոնտաժվում է կոյուղու PVC Ø50 և Ø110մմ խողովակներով: Ինքնահոս հեռանում են բակային ցանց, որը միանում է տարածքում տեղադրված կոյուղու մաքրման կայանին: **Օգտագործված ջուրը կօգտագործվի ոռոգման համար:**

Անձրևաջրերը կհավաքվեն ոռոգման համար նախատեսված 2 ջրի ռեզերվուարներում՝ 46մ³ ընդհանուր ծավալով և կօգտագործվեն դպրոցի կանչապատ գոտիների ոռոգման համար:

Ռոռզման համակարգ

Ռոռզման համակարգ. Ռոռզումը իրականացվում է միանալով առկա ջրատարին նախատեսված ջրաչափական հորից հետո՝ վերցված ջուրը հաշվառելու համար: Միացման հանգույցում նախատեսված է հավաքովի հոր $D=1.5$ մ, $H=1.5$ մ չափերի, որտեղ խողովակների վրա տեղադրվում են փականներ: Նախատեսվել է ռոռզման համակարգի իրականացում $de32(De)$ խողովակներով, որոնք տեղադրվելու են ստորգետնյա խրամուղիներում: Կանաչապատվող տարածքների ջրումը իրականացվելու է խողովակների վրա տեղադրվող ջրթող ծորակների միջոցով՝ ճկափողով:

Համակարգը դատարկվելու համար նախատեսված են ԴՀ-1, ԴՀ-2 հորերը, որոնց մեջ տեղադրված են դատարկման համար փականներ: Դատարկումը իրականացվելու է կից գտնվող հեղեղատար բաքի մեջ:

Ռոռզման նպատակով նախատեսվում է տեղադրել 10մ³ տարողությամբ պահուստային բաք, իսկ ռոռզման համար նախատեսված ջուրը պարբերաբար բերվելու է հատուկ լիզենզավորված կազմակերպության կողմից՝ ցիստեռնով:

Գազամատակարարում, ջեռուցում և օդափոխում

Գազամատակարարում: Դպրոցի գազամատակարարումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող գազատարից, որն ապահովում է ներկայումս գործող դպրոցի կարիքները:

Գազամատակարարման իրականակառուցումը (միացումները) կատարվելու են անմիջապես «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ: Հաշվի առնելով, որ նոր դպրոցը կառուցվում է նախկին դպրոցի տարածքում, գազամատակարարման համար նոր տեխնիկական պայմանների ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջանում, քանի որ բոլոր կոմունիկացիաներն արդեն առկա են ու պայմանները չեն փոխվում:

Ջեռուցում: Ջեռուցման ցանցի նախագիծը կատարվել է համաձայն 2.04.07-86 շինարարական նորմերի և կանոնների: Դպրոցի ջեռուցման գործընթացը նախատեսվում է կազմակերպել նորակառույց կաթսայատան միջոցով, որն ունի 6մx9մ առանցքային չափեր: Կաթսայատունը սպասարկվելու է միայն նորակառույց դպրոցին: Ջերմատարը ջուրն է՝ $t_1=800^{\circ}\text{C}$, $t_2=650^{\circ}\text{C}$ (հաշվարկային), վառելիքը՝ բնական գազ:

Ելնելով ջերմային ծախսերից նախատեսված են ավտոմատացված ջրային երկու կաթսաներ՝ $Q=954$ կՎտ նոմինալ ջերմարտադրողականություններով: Կաթսաները համալրված են ավտոմատացված գազի այրիչներով: Տաք ջուր ստանալու համար կաթսայատանը նախատեսվում են ջրա-ջրային թերթավոր տաքացուցիչներ 2 հատ (մեկը պահուստային)՝ յուրաքանչյուրը $Q=180$ կՎտ ջերմային հզորությամբ: Ընտրված կաթսաներն ունեն փոքր աերոդինամիկական դիմադրություն, որի շնորհիվ ծխագազերի արտանետումը ընտրված է բնական:

Օդափոխություն: Ջեռուցումը և օդափոխությունը շենքում նախատեսված է ըստ ՀՀ գործող շինարարական նորմերի, մասնավորապես.

- պատվիրատուի առաջադրանքը,
- ճարտարապետաշինարարական գծագրերը,
- գործող շինարարական նորմերը և կանոնները,
- ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում օդափոխում և օդի լավորակում»,
- ՀՀՇՆ 31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր»,

- ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն»,
- ՀՀՇՆ II-6.02-2006 «Մեյսմակայուն շինարարություն. նախագծման նորմեր»:

Իրականացվում է ներածող-արտածող, բնական և արհեստական օդափոխություն: Դասասենյակներում օդի ներածումը բնական է, իրականացվում է լուսամուտներից՝ դասամիջոցներին: Արտածումը ևս բնական է, իրականացվում է սենյակի միապատիկ ծավալի չափով՝ ուղղաձիգ օդատարների միջոցով:

Առանձին ներածման-արտածման համակարգեր են նախատեսված ճաշարանի, հանդիսությունների սրահի, մարզադահլիճի, արհեստանոցի, տնարարության և քիմիայի կաբինետների համար: Էներգաարդյունավետության նպատակով նախատեսված են ներածման-արտածման սարքեր՝ ռեկուպերատորով: Քիմիայի դասարանի արտածման պահարանից նախատեսված է մեխանիկական դրդմամբ արտածում: Արտածված օդը կոմպենսացնելու համար նախատեսված է ներածում միջանցքից, որը ապահովելու համար նախատեսված է ներածման դրոսել փական՝ էլ. շարժաբերով: Փականը բլոկված է արտածման օդափոխիչի հետ: Սանհանգույցներից կազմակերպված են մեխանիկական դրդմամբ արտածման համակարգեր: Ներածման բոլոր օդատարները, ինչպես նաև ռեկուպերացիոն համակարգերի արտածման օդատարները մեկուսացվում են 10մմ հաստությամբ մեկուսիչներով: Օդատարները ընդունված են ցինկապատ պողպատից:

Արտաքին օդի ձմեռային հաշվարկային ջերմաստիճանը ջեռուցման և օդափոխության համակարգերի համար $t=-21^{\circ}\text{C}$ է: Օդափոխության և ջեռուցման համակարգերի համար ջերմատարը ջուրն է՝ $80-65^{\circ}\text{C}$: Ջերմամատակարարումը իրականացվելու է դպրոցի նորակառույց կաթսայատնից: Դպրոցում նախատեսված է ջրային ջեռուցում, երկխողովականի, համընթաց շարժումով, ջրի մեխանիկական շրջանառությամբ համակարգով: Առաջին հարկի մարտկոցների մագիստրալ մատակարար և հետադարձ խողովակաշարերը անցնում են հատակի հաստության միջով, իսկ երկրորդ հարկի ջեռուցման մարտկոցների մատակարար և հետադարձ խողովակները անցնում են առաջին հարկի առաստաղի տակով: Որպես ջեռուցման սարքեր նախատեսված են ալյումինե ջեռուցման մարտկոցներ, որոնց մարտկոցների ջերմատվությունը կարգավորելու համար տեղադրվելու են ջերմակարգավորիչ փականներ: Բոլոր ջեռուցման սարքերի վրա նախատեսված են օդի հեռացման փականներ և դատարկման փականներ: Ջերմային հանգույցում օդահեռացման նպատակով տեղադրվում են ավտոմատ օդահաններ: Ջեռուցման բոլոր մագիստրալ խողովակները մեկուսացվում են 10մմ հաստությամբ սինթետիկ կաուչուկե մեկուսիչներով:

Էլեկտրամատակարարում

Արտաքին էլեկտրամատակարարման նախագիծը մշակված է համաձայն նախագծման առաջադրանքի և գլխավոր հատակագծի: Նախագիծը մշակված է համաձայն ПУЭ-2009 «Գյուղական էլեկտրական ցանցերի և էլեկտրակայանների նախագծման տեխնոլոգիական նորմաների» և ուրիշ գործող նորմատիվ ու ղեկավարող ձեռնարկների:

Դպրոցի շենքի էլեկտրամատակարարման նախագիծը և կառուցումը իրականացվելու է «ՀէՑ» ՓԲԸ-ի կողմից՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Հաշվի առնելով, որ նոր դպրոցը կառուցվում է նախկին դպրոցի տարածքում, էլեկտրամատակարարման համար նոր տեխնիկական պայմանների ձեռքբերման անհրաժեշտություն չի առաջանում, քանի որ բոլոր կոմունիկացիաներն արդեն առկա են ու պայմանները չեն փոխվում:

Էլեկտրամատակարարում: Դպրոցի նոր կառուցվող շենքի էլեկտրամատակարարման նախագիծը մշակված է՝ համաձայն ՀՀՇՆ22-03-17, ՄՆԻՊ 3.05.06-85 դրույթների: Ըստ հուսալիության աստիճանի՝ շենքի հոսանքասպառիչները դասվում են II կարգի: Նախատեսվում է 0.4կՎ լարման սնող 2 մալուխների (1 մալուխը պահուստային) ներանցում -3.60 միջում գտնվող էլ. վահանայինի սենքում տեղակայված փնջային փոխարկիչ: Էլ. լուսավորության ցանցը նախատեսված է հետևյալ տեսակների՝ աշխատանքային, վթարային, տարհանման, վերանորոգման:

Բաշխիչ վահաններից տարված են սնող գծեր դեպի խմբային լուսավորության և ուժային վահաններ: Սնող գծերը նախատեսված է իրականացնել պղնձե մալուխներով, որոնք տեղադրվում են դակված մալուխների վրա: Խմբային ցանցը իրականացվում է պղնձե չիրկիզվող ԹԹՔՎ-LS մակնիշի մալուխներով, անցկացված ճկուն խողովակների մեջ: Նախատեսված են լուսադիոդային լուսատուներ համապատասխան հզորություններով: Անջատիչները և վարդակները դասասենյակներում տեղադրվում են հատակից 1.8մ բարձրության վրա, այլ սենքերում՝ հատակից 0.8մ, վահանները՝ 1.5մ բարձրության վրա հատուկ պատրաստված խորշերի մեջ: Կենսաբանության, ֆիզիկայի և քիմիայի կաբինետներում յուրաքանչյուր սեղանի տակ նախատեսված է հատակի մեջ տեղադրվող տուփ սեղանների վրա տեղադրվող վարդակների համար: Հաղորդագծերը նախատեսված են պղնձե մալուխներով, տեղադրված խողովակների մեջ: Վերջիններս տեղադրվում են բետոնե հատակի տակ մալուխատարերով: Ցանցի ղեկավարումը իրականացվում է ուսուցչի վահաններից: Նախատեսված է տանիքի ջրհավաք ձազարների ջեռուցում: Օդափոխության սարքերի և պոմպերի սնող գծերը նախատեսված են պղնձե մալուխներով: Հրդեհի դեպքում օդափոխության ցանցը անջատվում է: Նախատեսված են անկախ խզիչներ: Որպես անվտանգության լրացուցիչ միջոց նախատեսվում է հողանցման օջախ 4.0 օհմ դիմադրությամբ: Էլեկտրաէներգիայի բաշխումը եռաֆազ ցանցում կատարվում է հինգ հաղորդալարերով (L1,L2,L3,N,PE), միաֆազ ցանցում երեք հաղորդալարերով (L1N,PE), անցկացնելով առանձին PE հաղորդալար, սկսած մուտքի վահանից: Նախատեսված է կաթսայատան և կոյուղու մաքրման ցանցերի էլ.սնուցում ԳԲՎ-1 և ԳԲՎ-2 բաշխիչ վահաններից: Բոլոր էլ.մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն գործող էլեկտրատեխնիկական կանոնների և նորմերի:

Էներգախնայողության ու էներգաարդյունավետության միջոցառումներ

Նոր դպրոցի շենքի էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական լուծումները իրականացվել են համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշման դրույթների, շինարարական հատակագծերի և ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Էներգաարդյունավետության տեսանկյունից նախատեսված են միջոցառումներ շենքի երեսապատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների տեղադրման, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացման ուղղությամբ, մասնավորապես.

- բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների կիրառում խողովակաշարերի և օդատարների համար՝ ջերմային կորուստների նվազեցման նպատակով,
- արտաքին կոնստրուկցիաների և օդատարների ջերմամեկուսացում,
- ջերմային կորուստների նվազեցման նպատակով բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների /пеноплекс/ կիրառում,
- օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում և այլն:

Արևային վահանակների տեղադրում: Նախագծով նախատեսվում է նոր դպրոցի տանիքին տեղադրել 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 232 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսքշիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 16 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար: Տանիքին ՖՎ վահանակները տեղակայվում են ալյումինե կրող հենակառուցվածքի վրա ձգման միջոցով: ՖՎ կրող հենակառուցվածքի բոլոր դետալները և տրամատներն էլեկտրոլիզացված ալյումինից են: Փոխակերպիչները փոփոխական հոսանքի կողմից կարճ միացումներից և իմպուլսային գերլարումներից պաշտպանելու համար փոփոխական հոսանքի համակցման տուփի (ՓՀՀՏ) մեջ տեղադրվում են անհատական և մուտքային ինքնավար անջատիչներ, իմպուլսային գերլարման սահմանափակիչ: ՖՎ համակարգը բաշխիչ էլեկտրական ցանցին միանում է ՓՀՀՏ-ն մալուխով շենքի մուտքային բաշխիչ վահանին էլեկտրականապես միանալու միջոցով: Հաստատուն հոսանքի մալուխները իջեցվում են շենքի հորանների միջով՝ ծալքախողովակի մեջ և միանում է շենքի էներգետիկական սենյակում գտնվող փոխակերպիչներին: Շենքի էլեկտրամատակարարումը և դպրոցի էլեկտրաէներգիայի հաշվառումը «ՀԷՑ»-ի հետ անհրաժեշտ է իրականացնել դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ: ՖՎՀ-ն միացվելու է դպրոցի գոյություն ունեցող հողանցման ցանցին: **Արևային վահանակների մատակարարումն ու տեղադրումն իրականացվելու են համապատասխան հավաստագրում (սերտիֆիկացում) ունեցող մասնագիտացված կազմակերպության կողմից, որը կիրականացնի նաև համակարգի հետագա տեխնիկական սպասարկումը, ինչպես նաև շարքից դուրս եկած վահանակների ապամոնտաժումը, հավաքումը և օտարումը:**

Հակահրդեհային համակարգ. Հրդեհային ազդանշանման լրակազմի աշխատանքային գծագրերը մշակված են ճարտարապետա-շինարարական գծագրերի հիման վրա: Նախագծի տվյալ մասով իրականացվում է հրդեհային ավտոմատ ազդանշանում: Շենքի ներսում, հրդեհի հայտնաբերման և ահազանգման համար նախատեսված են հրդեհային ծխային, ջերմային, ձեռքի ազդասարքեր, ինչպես նաև լուսաձայնային ազդասարք: Ձեռքի ազդասարքերը տեղադրվում են պատին 1.5մ բարձրության վրա: Որպես ընդունիչ կայան օգտագործված է 20 մուտքանի հսկիչ պանել, LSD ստեղնաշարով, ավտոմատ սնուցման բլոկով, ակումուլյատորով: Մուտքի հսկիչ պանելը սնվում է ՌԻՎ բահանակից: Հրդեհի ազդանշանի դեպքում կենտրոնական վահանակի օգնությամբ կարելի է ճշտել, որ գոնայում է տազնապ: Հսկիչ պանելը տեղադրվում է առաջին հարկում, ուսուցչանոցում: Պանելի սնուցումը իրականացվում է ԹԹթ մակնիշի մալուխով: Հրդեհային համակարգի ազդասարքերը տեղադրվում են պաշտպանվող սենյակի առաստաղի վրա, ինչպես նաև պատերին: Հրդեհային ազդանշանման ցանցը իրականացված է Խկհնվչ(Ը) FRLS 1x2x0.5 մակնիշի մալուխով:

Ցանցի մալուխը անցնում են պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակի միջով, թաքնված սվաղի շերտի տակ: Ընդունիչ կայանը միացված է պահպանային ազդանշանման սարքին, որը ահազանգի դեպքում ունի հնարավորություն բջջային ցանցով ավտոմատ զանգելու իր մեջ մուտքագրված 4 հեռախոսահամարներին հաջորդաբար (ոստիկանություն, 911, և այլ):

Սպասարկող անձնակազմին էլեկտրական հոսանքից պաշտպանելու համար նախատեսվում է հսկիչ պանելի հողակցումը: Ավտոմոտ սնուցման բլոկը տեղադրվում է ուսուցչանոցում, որը շուրջօրյա հսկվում է:

6.2. Շինարարության փուլ

Քանդման աշխատանքներ: ՀՀ Կառավարության 2019թ. փետրվարի 6 թիվ 87-Ս որոշման համաձայն՝ (<https://www.e-gov.am/gov-decrees/item/31407/>) Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպելու է դպրոցի շենք-շինությունների քանդման (ապամոնտաժման) աշխատանքների իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի հետ համաձայնեցված ծավալներին համապատասխան:

Շենք-շինությունների քանդման արդյունքում ձևավորվելիք շինանյութը սեփականության իրավունքով անհատույց հանձնվելու է դպրոցի կառուցման համար մրցութային գործընթացում ընտրված շինարարական կազմակերպությանը: Քանդման, ներառյալ շենքերի հիմքերի և շինարարական աղբի տեղափոխման աշխատանքներն իրականացվելու են ընտրված շինարարական կազմակերպության հաշվին, որը ևս ամրագրված է կառավարության սույն որոշման մեջ:

Գոյություն ունեցող դպրոցի շենքի քանդման աշխատանքները կիրականացվեն ապամոնտաժման եղանակով: Ապամոնտաժման եղանակը՝ մեքենա-մեխանիզմ: Նախքան նոր դպրոցի կառուցումն ապամոնտաժվելու են բոլոր շինությունները: Ապամոնտաժվող շենքերը հիմնականում քարե կոնստրուկցիաներով շինություններ են, մետաղաթիթեղյա ծածկով:

Քանդման աշխատանքներն ապամոնտաժման եղանակով իրականացնելու դեպքում հնարավոր կլինի խուսափել բնապահպանական ազդեցություններից, մասնավորապես, աղմուկի և փոշու բարձր մակարդակների առաջացումից:

Շենքի ապամոնտաժման աշխատանքները նախատեսվում է իրականացնել փուլ առ փուլ: Սկզբում կիրականացվեն դպրոցի շենքի տանիքի և փայտե կոնստրուկցիաների, դռների, պատուհանների և մետաղական ճաղավանդակների ապամոնտաժումը, որից հետո կիրականացվեն սկզբում երկրորդ հարկի ծածկի ապամոնտաժումը, իսկ այնուհետև՝ կտրող գործիքների օգնությամբ մասնաշենքերի կոնստրուկտիվ կարերի և պատերի քարերի ապամոնտաժման գործողությունները, ինչպես նաև ջրթող խողովակների և ձևավոր մասերի հեռացման աշխատանքները: Այնուհետև նույն հաջորդականությամբ կիրականացվի առաջին հարկի ապամոնտաժումը: Ծածկերի և միջհարկային սալերի ապամոնտաժումը կիրականացնի գոդման միջոցով, որից հետո անջատված սալերը և սյուները ճուպանների միջոցով կմիացվեն թրթուռավոր կռունկին և դանդաղ կտեղափոխվեն հրապարակի ազատ տարածություն:

Շինարարական հրապարակի կազմակերպումը կիրականացվի բացառապես դպրոցի տարածքի վարչական սահմանների ներսում, որի կազմակերպման համար հաշվի են առնված գործող նորմերով պահանջվող միջոցառումները, մասնավորապես.

- տարածքի ժամանակավոր ցանկապատում,
- շին. հրապարակի լուսավորության ապահովում,
- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքներ՝ ապահովելով շին. հրապարակում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, բիոզուգարան, աշղեկի աշխատասենյակ և այլն),

- շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը,
- շին. աշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիները:

Շինհրապարակի մուտքային և ելքային հատվածները ասֆալտապատ տարածքից հեռու են մոտ 150մ, որն իրենից ներկայացնում է ներհամայնքային գրունտային բարեկարգ ճանապարհ: Գրունտային ճանապարհին նախատեսվում է լցնել ավագ կամ մանրախիճ՝ տեխնիկան կրկնակի կեղտոտումից զերծ պահելու նպատակով: **Շինհրապարակում նախատեսվում է տեխնիկայի անիվների լվացման կայանի կազմակերպում:** Շինարարական տեխնիկայի՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ անհրաժեշտ է իրականացնել անիվների և արտաքին մասերի լվացում՝ ճանապարհների վրա հողի, փոշու և այլ աղտոտիչների տարածումը կանխելու նպատակով: (Շինարարական հրապարակի կազմակերպման նախագիծը ներկայացված է հավելված-5-ում) ;Լվացման արդյունքում առաջացած ջրերը հավաքվում են հարևանությամբ նախատեսվող պարզարանում: Նստեցումից հետո ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման և այլ հնարավոր նպատակներով, իսկ հատակի նստվածքը պարբերաբար կհեռացվի շինհրապարակից շինարարական աղբի հետ:

Նախաշինարարական փուլում կիրականացվեն նաև կոմունիկացիաների վերատեղադրման, տեղափոխման և միացման աշխատանքները՝ գոյություն ունեցող կոմունիկացիաներին: **Նախագծով նախատեսվում է շինհրապարակում տեղադրել համապատասխան տարողության պարզարան (նստեցման ավազան), որտեղ կուղղորդվեն ոչ միայն բետոնապատման աշխատանքներից առաջացած բետոնաջրերը, այլև պատրաստի բետոն մատակարարող մեքենաների բետոնախառնիչների և բետոնամղիչների լվացման արդյունքում առաջացած բետոնաջրերը:** Հաշվի առնելով, որ նշված տեխնիկայի լվացումն իրականացվում է յուրաքանչյուր օգտագործումից հետո՝ բետոնի կարծրացումը կանխելու նպատակով, լվացման ջրերը կհավաքվեն պարզարանում, որտեղ կապահովվի կախույթների նստեցումը: Պարզեցված ջուրը, անհրաժեշտության դեպքում, կօգտագործվի կրկնակի տեխնիկական նպատակներով կամ կհեռացվի գործող նորմատիվ պահանջներին համապատասխան, իսկ նստվածքը կհավաքվի և կհանձնվի սահմանված կարգով՝ բացառելով շրջակա միջավայրի աղտոտումը:

Շինարարական աշխատանքներ: Շինարարական աշխատանքներն իրականացվում են երկու փուլով: Առաջին փուլը նախապատրաստական շրջանն է, իսկ երկրորդ փուլում իրականացվում են հիմնական աշխատանքները:

Հիմնական աշխատանքներն իրենց հերթին բաղկացած են ներկայիս կառույցի ապամոնտաժման աշխատանքներից և նախատեսվող նոր դպրոցի մասնաշենքերի (ներառյալ օժանդակ կառույցների) շինարարական աշխատանքներից:

Նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները

- Շինհրապարակի արտաքին տարածքի սահմանազատում ժամանակավոր ցանկապատով, լուսավորությամբ և արգելափակիչ նշաններով:
- Ժամանակավոր շինությունների տեղադրում գոյություն ունեցող ազատ տարածքում:

Հիմնական փուլում իրականացվելու են հետևյալ հիմնական աշխատանքները.

- **Քանդման/ապամոնտաժման աշխատանքների իրականացում** այնպիսի հերթականությամբ, ինչը թույլ կտա հիմնական ապամոնտաժումն իրականացնել շինության երկու կողմից՝ պահպանելով անվտանգության

կանոնները: Ապամոնոտաժման աշխատանքների դեպքում կկիրառվեն պաշտպանիչ ցանցեր, որոնք մասնաշենքի ապամոնոտաժման ընթացքում կապահովեն բանվորների և շինանձնակազմի անվտանգությունը թափվող և ընկնող առարկաներից: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպելու է դպրոցի շենք-շինությունների քանդման (ապամոնոտաժման) աշխատանքների իրականացումը:

- **Շինարարական/մոնտաժման աշխատանքների իրականացում**, որի ժամանակ կիրականացվեն նոր դպրոցի մասնաշենքերի շինարարական աշխատանքները:

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների ցանկը առաջարկվում է հասցնել նվազագույնի, հաշվի առնելով այն, որ շինհրապարակը գտնվում է համայնքի բնակելի հատվածում: Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում: Առաջարկվում է նախատեսել կոնտեյներների տիպի հատուկ շինություններ՝ աշխղեկի սենյակ, գործիքների պահեստ, ինչպես նաև բիոզուգարան և կիսափակ պահեստ:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Մինչ շինարարական աշխատանքները սկսելը Կապալառուն պետք է ունենա անհրաժեշտ բոլոր համաձայնությունները, տրված համայնքապետարանի կողմից՝ կապված գոյություն ունեցող կոմունիկացիաների, էլեկտրագծերի ու գազատարի հետ հատման, շինարարական աղբի տեղափոխման, գործող ավտոճանապարհների տարածքում շինաշխատանքների իրականացման վերաբերյալ և այլն:

Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ և թույլտվությամբ:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- Շաղախը և բետոնը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցից, որն ունի չափաբաժին կշռող սարքավորումներ՝ ապահովելու համար նախագծում նախատեսված բետոնի դասը իր բոլոր ցուցանիշներով: Առաքումը նախատեսվում է իրականացնել մասնագիտացված տրանսպորտային միջոցներով և այնպիսի պարբերականությամբ, որպեսզի ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- Հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար խորհուրդ է տրվում օգտագործել հարակից տարածքների շինարարական արդյունաբերության թերբեռնված հզորությունները
- Առանձին ամրանային ձողերը և կմախքները մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կրերվեն անմիջապես շինհրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:

- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու լիցքավորումը նախատեսվում է իրականացնել շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից:

Շինարարական հրապարակը, ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն կազմակերպվելու է բացառապես դպրոցի վարչական տարածքի սահմաններում:

Դպրոցի շենքի կառուցման ընթացքում բացառապես կօգտագործվեն նոր և տեխնիկական պահանջներին բավարարող շինարարական նյութեր, որոնք ձեռք կբերվեն բացառապես լիցենզավորված մատակարարներից: Կբացառվի հրապարակում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը:

Հրապարակում ստրոն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստրուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները և հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահապանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել տարածքով անցնող ջրագծից, որը պատկանում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակը ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շին. աշխատանքների ընթացքում կպահպանվեն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի պահանջները, համաձայն որի հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

Շինարարական աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Աշխատուժի բրիգադիայի կազմը բերված է համապատասխան նորմատիվային տվյալների EHՊ-ի համաձայն: Նախատեսվող աշխատողների առավելագույն քանակը շինհրապարակում կազմելու է 19 մարդ, որից ինժեներատեխնիկական անձնակազմ՝ 2 մարդ, բանվորներ՝ 17 մարդ:

Շինարարության կազմակերպում

Շինարարական աշխատանքների տևողությունը 784 օր է: Շին. աշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիները կտեղակայվեն դպրոցի տարածքի վարչական սահմանների ներսում: Շինարարական հրապարակում նախատեսված է նաև հարթակ տեխնիկայի լվացման համար: Նախքան շինհրապարակից ելքը անհրաժեշտ է իրականացնել տեխնիկայի անիվների և արտաքին հատվածի վրա բետոնային մնացորդների լվացում, որի արդյունքում առաջացած ջրերը հավաքվում են հարևանությամբ նախատեսվող պարզարանում: Նստեցումից հետո ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման և այլ հնարավոր նպատակներով, իսկ հատակի նստվածքը

պարբերաբար կհեռացվի շինհրապարակից շինարարական աղբի հետ: Շինհրապարակի մուտքային և ելքային հատվածները ասֆալտապատ տարածքից հեռու են մոտ 150մ, որն իրենից ներկայացնում է ներհամայնքային գրունտային բարեկարգ ճանապարհ: Գրունտային ճանապարհին նախատեսվում է լցնել ավագ կամ մանրախիճ՝ տեխնիկան կրկնակի կեղտոտումից զերծ պահելու նպատակով:

Շինարարական հրապարակում նախատեսված է նաև հարթակ տեխնիկայի լվացման համար: Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կձևավորվի շինարարության ընթացքում: Առաջարկվում է նախատեսել կոնտեյներների տիպի հատուկ շինություններ՝ աշխղեկի սենյակ, գործիքների պահեստ, ինչպես նաև բիոզուգարան և կիսափակ պահեստ: Ժամանակավոր շինությունները կտեղակայվեն գոյություն ունեցող ազատ տարածքում:

Հիմնական մեքենա-մեխանիզմներ ու շինարարական անձնակազմ Շինարարական մեքենա-մեխանիզմների և սարքավորումների տեսակները և տիպերը տրված են խորհրդատվական կարգով և կարող են ենթարկվել փոփոխության, ելնելով գոյություն ունեցող տեխնիկայի առկայությունից կամ ձեռքբերման հնարավորությունից, սակայն պետք է ունենան նույնատիպ տեխնիկական ցուցանիշներ:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ հիմնական մեքենաների և մեխանիզմների ցանկը ներկայացված է աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 11 Տեխնիկական միջոցների անվանացանկ*

N	Մեքենա-մեխանիզմների անվանում	Մակնիշ/հզորություն	Քանակ, հատ
1.	մոբիլային վերամբարձ կռունկ	XCT25L5_S	2
	հիմնական վերամբարձ մեխանիզմի հնարավոր այլ տարբերակներ	DK 250 (թրթուրավոր) KC 55713 -6 ГАЛИЧАНИН	
2.	էքսկավատոր՝ կախովի սարքավորումներով	ET-14 (կամ նմանատիպեր)	1
3.	Ավտոբետոնապոմպ	SCHWING S36 SX	1
4.	Բուլդոզեր	CAT CS 563 (կամ նմանատիպ)	
5.	Գլդոն	CAT D6R (կամ նմանատիպ)	
6.	թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИБ -91А	2
7.	թրթռիչ խորքային էլեկտրական	ИБ -102А	2
8.	փոխարկիչ թրթռիչների համար	ИБ – 4	2
9.	դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ -4709А	1

10.	եռակցման տրանսֆորմատոր	ТД -500	2
11.	տոփանիչներ պնևմո և ձեռքի		4
12.	փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	2
13.	հետահար մուր		1
14.	Քվտոփնքնաթափ		ըստ հաշվարկի
15	Ավտոբետոնախառնիչ	СБ69Б	ըստ հաշվարկի

* մեքենաների և մեխանիզմների կազմը տրված են խորհրդատվական կարգով և կարող են փոխարինվել նույն տեխնիկական պարամետրեր ունեցող այլ մեքենաներով ու մեխանիզմներով

Շինարարության նորմատիվ տնտղությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը:

Շինարարական աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Աշխատուժի բրիգադիայի կազմը բերված է համապատասխան նորմատիվային տվյալների ЕНП-ի համաձայն: Շինարարության նորմատիվ տնտղությունը որոշվում է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Շինարարության տնտղությունը նախատեսվում է 784 օր:

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի ազդեցության նվազեցման նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- Կօգտագործվեն տեխնիկապես սարքին և կանոնավոր տեխնիկական սպասարկում անցած շինարարական մեքենաներ և մեխանիզմներ:
- Աղմուկ առաջացնող սարքավորումների (հորատման սարքավորումներ, բուլդոզերներ, ավտոբետոնապոմպեր, թրթռիչ միսիչներ և այլն) շահագործումը կիրականացվի հիմնականում ցերեկային ժամերին՝ բացառելով գիշերային աշխատանքները, բացառությամբ տեխնոլոգիական անհրաժեշտության դեպքերի:
- Միաժամանակ գործող բարձր աղմուկ առաջացնող տեխնիկայի քանակը, հնարավորության սահմաններում, կսահմանափակվի՝ աշխատանքների հերթականության օպտիմալ կազմակերպման միջոցով:
- Շինարարական տեխնիկան, պարապուրդի ընթացքում, չի աշխատեցվի դատարկ ընթացքով, իսկ շարժիչները կանջատվեն աշխատանքային ընդմիջումների ժամանակ:
- Բարձր աղմուկ առաջացնող կայուն սարքավորումները, հնարավորության դեպքում, կտեղադրվեն բնակելի և հասարակական կառուցապատումից առավել հեռու հատվածներում:
- Անհրաժեշտության դեպքում կկիրառվեն ժամանակավոր աղմկապաշտպան միջոցներ (շարժական էկրաններ, պաշտպանիչ վահանակներ կամ ժամանակավոր ցանկապատեր)՝ աղմուկի տարածումը սահմանափակելու նպատակով:

- Կապահովվի աշխատանքների կազմակերպումն այնպես, որ աղմուկի ազդեցությունը շրջակա բնակավայրերի և հարակից տարածքների վրա լինի նվազագույն:
- Բնակչության բողոքների կամ անհրաժեշտության դեպքում կիրականացվեն աղմուկի մակարդակի գործիքային չափումներ և, անհրաժեշտության դեպքում, կձեռնարկվեն լրացուցիչ մեղմման միջոցառումներ:
- Շինարարական աշխատանքների ընթացքում կապահովվի Հայաստանի Հանրապետության գործող սանիտարական նորմերով սահմանված թույլատրելի աղմուկի մակարդակների պահպանումը:

6.3. Բարեկարգում և կանաչապատում

Նախագծով նախատեսվում է կառուցել նոր դպրոցի մասնաշենքերը ներկայիս դպրոցի տարածքում՝ ապամոնտաժելով գործող մասնաշենքերը համաձայն նախագծման առաջադրանքի: Համաձայն նախագծային փաստաթղթում առկա տարածքի բարեկարգման և կանաչապատման ծրագրի՝ կառուցապատումից ազատ մնացած տարածքները բարեկարգվելու են և կանաչապատվեն:

Դպրոցի տարածքի կանաչապատման աշխատանքների նախագծումն իրականացվել է՝ հաշվի առնելով ՀՀ Կառավարության N 108-Ն (2018 թ.) որոշմամբ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները: Դպրոցի տարածքում նախատեսվում է ծաղկանոցի և սիզամարգերի հիմնում:

Բարեկարգման և կանաչապատման աշխատանքները կմեկնարկեն գոյություն ունեցող դպրոցի հին շենքի ապամոնտաժումից հետո:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումն ու օգտագործումը կիրականացվի ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցնելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի դպրոցի կողմից, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կպաշտպանվեն չափահավոր ծառատեսակները կփոխարինվեն նորերով: **Կանաչապատման նախագիծը ներկայացված է ստորև:**



7. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

Դպրոցի կառուցման շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, իսկ շահագործման փուլում ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով և բնական գազ:

7.1 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման, որոշ շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար: Դպրոցի նոր շենքի կառուցման և հին շենքի ապամոնտաժման աշխատանքների ընթացքում առաջացած հնարավոր փոշու մակարդակները կնվազեցվեն ջրցանի իրականացմամբ:

Շինարարության ժամանակ ժամանակավոր ջրամատակարարման համար ջրի հիմնական աղբյուր կծառայի համայնքային ջրամատակարարման ցանցը, որը շինարարության ողջ ընթացքում ապահովվելու է անհրաժեշտ ջրապահանջը:

Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ մակերևութային հոսքեր չառաջանան և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար:

Հաշվի առնելով, որ միաժամանակ շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկային մակերեսը կազմում է առավելագույնը 31,767.4 մ² (հողամասի մակերեսը դրված է) ջրցանի հաշվարկն իրականացվել է տարածքի այդ չափի համար՝ ներառելով քանդման և շինարարության գործընթացները.

$U1 = S1 \times K1 \times T$, որտեղ

S1 - ջրվող տարածքի մակերես, 365800 մ²,

K1 - 1 մ² օրական ջրցանի նորմ, 0.0015 մ³ (կամ 1.5լ/մ²):

T - հողային աշխատանքների օրերի քանակ, 88օր:
Հետևաբար ջրցանի ջրապահանջը կկազմի.
 $U1 = 365800 \times 1 \times 0.0015 \times 88 = 48285.6 \text{ մ}^3$

Աշխատակիցների և բանվորների խմելու և կենցաղային պահանջների համար ջրապահանջը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n1 \times N1) T1$, որտեղ

n – ԻՏ աշխատողների թվաքանակ, 2 մարդ

N - ԻՏԱ ջրածախսի նորմատիվ, 0.016 մ3օր/մարդ

T1 - շինարարության ողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի թիվ, 784 օր

n1- բանվորների (այդ թվում՝ վարորդներ) թվաքանակ, 17 մարդ

N1 - բանվորների ջրածախսի նորմատիվ, 0.025 մ3օր/մարդ

$W_{\text{խ.տ.}} = (2 \times 0.016 + 17 \times 0.025) \times 784 = 358.288 \text{ մ}^3$

Ընդհանուր ջրապահանջը կկազմի՝ $48285.6 \text{ մ}^3 + 358.288 \text{ մ}^3 = 48643.888 \text{ մ}^3$

Ելնելով շինարարության ոչ մեծ տևողությունից՝ հատուկ շինարարական բազայի ստեղծումը նպատակահարմար չէ: Շինհրապարակում առաջարկվում է նախատեսել կոնսեյների տիպի հատուկ շինություններ՝ աշխղեկի գրասենյակ, հանդերձարան, լվացարան-ցնցուղարան, փակ պահեստ, ինչպես նաև ճաշարան, բիոզուգարան, աղբի տարրաներ և այլն: Բիոզուգարանի մաքրումն իրականացվելու է ըստ լցվածության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում և ըստ անհրաժեշտության այլ լրացուցիչ պայմանների ապահովումը կարող է իրականացվել հետագայում:

Ընդհանուր առմամբ, շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները նվազագույն կլինեն, քանի որ ԲԿՊ-ում նախատեսված են ազդեցությունների նվազեցման/մեղմման միջոցառումներ: Սակայն հնարավոր է, շինհրապարակներում պահեստավորված շինարարական նյութերով, շինարարական հոսքաջրերի առաջացում, ինչպես նաև շինարարության ընթացքում աշխատողների կենսագործունեության արդյունքում տնտեսա-կենցաղային հոսքաջրերի և պինդ թափոնների առաջացում:

7.2. Շինարարական նյութեր

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես .

- երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ
- ավազ, բետոն
- տուֆ
- Ավազ, պորտլանդ ցեմենտ

- սրբատաշ և կոպտատաշ քար
- էլեկտրոդներ
- մետաղ, մետաղական կառուցվածքներ
- ամրանային ձողեր
- բարձրորակ երեսապատման սալիկներ
- ապակի
- բարձրորակ սվաղ և ներկ

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների բետոնալցման համար համապատասխան դասի բետոնը պատվիրվելու է մասնագիտացված բետոնային հանգույցներում: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով:

Շինաշխատանքները կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից:

Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում: Արտադրական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1. Օդային ավազանի վրա ազդեցություն

Շինարարական գործունեության ընթացքում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ: Հորատման, բեռնման, թափոնակույտման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K6 \times B \times G \times 106 / 3600, \text{ գ/վ, որտեղ՝}$$

K1-ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2-ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէոզոլային մասնիկների, 0.02

K3-ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 2.5

K4-ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5-ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K6-ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G-ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է 2 ամիս կամ 2 ամիս x 22 օր x 8 ժամ = 352 ժամ/շինարարություն:

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը գնահատվում է 2000մ^3 կամ $G=11600\text{մ}^3:704=16.4\text{մ}^3/\text{ժամ}$, իսկ հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ $16.4\text{մ}^3/\text{ժամ} \times 1.7\text{տ}/\text{մ}^3 = 27.9\text{տ}/\text{ժամ}$:

$$Q = (0.05 \times 0.02 \times 2.5 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 27.9 \times 106) / 3600 = 0.00005\text{գ}/\text{վ}$$

Այսպիսով, գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի.

$$0.00005\text{գ}/\text{վ} \times 352\text{ժ}/2 \times 3600\text{վ}/106 = 0.6\text{տ}$$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Կանխատեսվում է, որ նշված արտանետումները չեն գերազանցի ՀՀ թույլատրված նորմերը, իսկ մթնոլորտային ավազանում դրանց հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես.

- կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակում աշխատանքային մակերեսների ջրցանման և փոշենստեցման գործողություններ,
- շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ, սահմանափակ արագությամբ (չի գերազանցի 30կմ/ժ արագությունը),
- սորուն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) շինարարական հրապարակում կպահվեն պաստառներով ծածկված վիճակում,
- աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենասարքավորումների տեխնիկական վիճակը:

Օդային ավազանի աղտոտվածության կանխմանն ուղղված միջոցառումների համալիր ցանկը ներկայացված է Բնապահպանական կառավարման պլանում (Տե՛ս հավելված 6):

Ծրագրի շրջանակում հարակից բնակելի և հասարակական շենքերից ստացված բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափագրումներ, որոնք կհամեմատվեն գործող օրենսդրական նորմերի և էլակետային տվյալների հետ:

8.2. Ջրային ռեսուրսների վրա ազդեցություն

Նախատեսվող գործունեության արդյունքում ջրային ավազանի աղտոտվածության ավելացում չի կանխատեսվում, քանի որ նախատեսվող գործունեության տարածքում և դրա մոտակայքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Սակայն հնարավոր է շինհրապարակներում պահեստավորված շինարարական նյութերով շինարարական հոսքաջրերի առաջացում, ինչպես նաև շինարարության ընթացքում աշխատողների կենսագործունեության արդյունքում տնտեսա-կենցաղային հոսքաջրերի և պինդ թափոնների առաջացում:

Հաշվի առնելով այս ամենը՝ ԲԿՊ-ում նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները՝ ուղղված հնարավոր ազդեցությունների նվազեցմանը/կանխմանը:

8.3. Հողային ռեսուրսների վրա ազդեցություն

Նախատեսվող գործունեության տարածքը յուրացված է տարածքի կառուցապատմամբ, իսկ ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների համաձայն գործունեության տարածքում հողաբուսական շերտը բացակայում է:

Այս ամենը հաշվի առնելով՝ հարկ է նշել, որ հողային համակարգերի աղտոտվածությունը քիչ հավանական է:

8.4. Թափոնների առաջացում և կառավարում

Նախագծի հողային աշխատանքների հաշվարկն իրականացվել է համաձայն ներկայացված երկրաբանական կտրվածքի, համաձայն որի ընդհանուր հողային հանույթը կազմում է 11600 մ³ է, որից ետլիցքը կազմում է 1000մ³: Մնացած 10600 մ³ քանակն իրենից ներկայացվում է փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող, որը կհեռացվի ու կտեղադրվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի, շինարարական աշխատանքների ընթացքում, մասնավորապես՝ նոր դպրոցի շենքի կառուցման, դպրոցի հին շենքի ապամոնտաժման և տարածքի բարեկարգման աշխատանքների ընթացքում գնահատվում են ստորև ներկայացվող կազմով թափոնների առաջացում.

Աղյուսակ 12. Թափոնների տեսակները ըստ վտանգավորության դասի և քանակի

Թափոնի անվանում	Ծածկագիր	Վտանգավորության Դաս	Քանակ
Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	91200400 01 00 4	IV	մոտ 3 տ
Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	31401100 08 99 5	IV	3130 խ.մ
Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ	91200601 01 00 4	IV	5000 տ
Եռակցման խարամ	31404800 01 99 4	IV	Քանակները չնշին են, նախագծային առումով՝ ոչ հաշվելի

Նախատեսվող գործունեության ընթացքում քսայուղերի և հեղուկ վառելիքի թափոնների առաջացում չի կանխատեսվում:

Ապամոնտաժման ընթացքում գոյացող կրկնակի օգտագործման համար երկրորդային հումքեր առկա չեն:

Գործունեության իրականացման ընթացքում ապամոնտաժման աշխատանքների հետևանքով կառաջանա շուրջ 5000տ շինարարական աղբ: Փորման աշխատանքների ընթացքում կձևավորվի շուրջ 3130մ³ վտանգավոր նյութերով չաղտոտված հողային գանգված: Վերջիններիս հեռացումն ու տեղադրումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Վաղարշապատի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայրում:

Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը գործունեության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 3տ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Շահագործման փուլում դպրոցի տարածքում տեղադրվելու են աղբամաններ և կենցաղային աղբը տարածքից հեռացվելու է համայնքի աղբահանությունն իրականացնող կազմակերպության կողմից:

Թափոնների փաստացի քանակի որոշումը և ծավալաթերթով նախատեսված վճարումը հնարավոր է իրականացնել տեղամասի տեխնիկական հսկողություն իրականացնող ինժեների և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության համաձայնությամբ: **Քանդման ընթացքում առաջացած թափոնները կտեղափոխվեն Վաղարշապատի համայնքապետարանի կողմից հատկացված տարածք:**

8.5.Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աղմուկի համեմատաբար բարձր մակարդակները գնահատվում են գոյություն ունեցող դպրոցի շենքի ապամոնտաժման աշխատանքների ընթացքում: Հաշվի առնելով այն, որ դպրոցի քանդումը նախատեսվում է իրականացնել ապամոնտաժման եղանակով, այն է՝ բացառելով որևէ խոշոր տեխնիկայի կիրառումը, ապա աղմուկի հնարավոր մակարդակները չեն գերազանցի ՀՀ ազգային նորմերը: Շին աշխատանքների ընթացքում օգտագործվող մեքենա-մեխանիզմները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնականում աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00-ից 18:00:

Շինարարական գործողությունների ընթացքում թրթռումների ազդեցություններ հարևան ազդակիրների վրա չեն կանխատեսվում: Շինարարական աշխատանքների ընթացքում կապալառու պարտավոր է հետևել ՀՀ թրթռումների գործող նորմերը, քանի որ ծրագրի շրջանակում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը պետք է վերացվի կամ փոխհատուցվի կապալառու ընկերության սեփական միջոցների հաշվին:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՀՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էքսկավատորը, իսկ ավարտին գլղոնը: Միաժամանակ այս երկու շինտեխնիկան չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրներն էլ կրում են ժամանակավոր բնույթ: Էքսկավատորը աշխատելու է 10 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 85 դԲ: Գլղոնը տարածքի բարեկարգման ընթացքում՝ 6 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 80 դԲ: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014: Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝ ≤ 200 կգ/մ²: Շինության պատերը ևս հանդիսանում են միաժամանակյա աղմուկից պաշպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$I_{աղ} = 23 \lg m\epsilon - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^2$$

$$I_{աղ} = 13 \lg m\epsilon - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^2,$$

որտեղ $m = Km$ – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ²,

K – գործակից է, որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը 200 կգ/մ²

$$K=1,3$$

$$M = 1,3 \times 200 = 260$$

$$L_{աղ} = 13 \lg m\epsilon - 13 = 18,2 \text{ դԲ}$$

Շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 85 - 18,2 = 66,8 \text{ դԲ}$$

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հանդիսանում են որպես պաշպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը RԱտր կազմում է միջինը 50 դԲ:

$$LA_{տար} = 66,8 - 50 = 16,8 \text{ դԲ}$$

Գլղոնի համար՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 80 - 18,2 - 50 = 11,8 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությանների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլղոնի 11,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

Թրթռման նորմաները բնակելի շենքերում, ըստ ՀՀ Առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները.

Աղյուսակ . 13

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները X0, Y0 և Z0 առանցքներով			
	Թրթռա արագացում		Թրթռա արագություն	
	մ/վրկ ² .10-3	դԲ	մ/վ .10-3	դԲ

2	10,0	80	0,79	84
4	11,0	81	0,45	79
8	14,0	83	0,28	75
16	28,0	89	0,28	75
31,5	56,0	95	0,28	75
63	110,0	101	0,28	75
Ճշգրտված ու համարժեքային արժեքները և դրանց մակարդակները	10	80	0,28	75
Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենյերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:				

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են ԲԿՊ-ում: Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ իրականացնել միայն բողոքների դեպքում:

8.6. Էներգախնայողության ու էներգաարդյունավետության միջոցառումներ

Նոր դպրոցի շենքի էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական լուծումները իրականացվել են համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշման դրույթների, շինարարական հատակագծերի և ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Էներգաարդյունավետության տեսանկյունից նախատեսված են միջոցառումներ շենքի երեսապատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների տեղադրման, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացման ուղղությամբ, մասնավորապես.

- բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների կիրառում խողովակաշարերի և օդատարների համար՝ ջերմային կորուստների նվազեցման նպատակով,
- արտաքին կոնստրուկցիաների և օդատարների ջերմամեկուսացում,
- ջերմային կորուստների նվազեցման նպատակով բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների /пеноплекс/ կիրառում,
- օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ դեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում և այլն:

8.7 Ազդեցություն պատմամշակութային հուշարձանների վրա

Հողային աշխատանքների ընթացքում պատահական գտածոյի (շարժական կամ անշարժ) անսպասելի հայտնաբերման դեպքում, համաձայն ՀՀ «Պատմության և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի (1998թ.) և ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

Նախատեսվող գործունեության տարածքում չկան պատմամշակութային հուշարձաններ, ուստի պատմամշակութային հուշարձանների վրա ազդեցություն չի կանխատեսվում:

8.8 Աշխատանքի անվտանգություն

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում մեծ ուշադրություն է դարձվելու աշխատանքային անվտանգության ապահովմանը, որի համար նախատեսված են մի շարք միջոցառումներ հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով:

Շինհրապարակում առողջության և աշխատանքային անվտանգությանն ուղղված կանոնները/միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի, որոնք համալիր ներկայացված են ԲԿՊ-ի «Առողջության և աշխատանքի անվտանգության պլան», ինչպես նաև «Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան» ենթաբաժիններում (Տե՛ս հավելված 6):

Շինարարական աշխատանքների ընթացքում խստորեն կպահպանվեն անվտանգության և հակահրդեհային միջոցառումները, մասնավորապես.

- Նախքան աշխատանքի սկսելը կկատարվի շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում և կտեղադրվեն մուտքը արգելող ցուցափեղկեր/նշաններ:
- Շինարարությունում շահագործվող կռունկը պետք է անցած լինի անվտանգության տեխնիկայի փորձաքննություն և գրանցված լինի «Տեխնիկայի անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ռեգիստրում:

Հակահրդեհային անվտանգությունը շինհրապարակում, աշխատատեղում և աշխատանքի տեղամասերում անհրաժեշտ է ապահովել համապատասխան «Հակահրդեհային անվտանգության կանոններ» պահանջներին համապատասխան, ապահովել կրակմարիչի առկայությունը և հրդեհային անվտանգության վերաբերյալ պաստառներն այլն:

Մինչև աշխատանքների սկսելը աշխատողներին պետք է հրահանգավորել անվտանգության կանոնների մասին: Բանվորների աշխատանքների պաշտպանությունը պետք է ապահովվի վարչակազմի կողմից, նրանց անհատական պաշտպանական միջոցներ տրամադրմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ, սաղավարտ և այլն):

Տանիքի և բարձրության վրա աշխատանքների իրականացման ժամանակ, աշխատանքներն անհրաժեշտ է կատարել անվտանգության գոտիների օգտագործմամբ, որոնք պետք է ամրացվեն կոնստրուկտիվ ճշտված և հուսալի էլեմենտից:

Եռակցման աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է հետևել, որպեսզի էլեկտրա և գազաեռակցված սարքերը գտնվեն ճանապարհներից և անցումներից մի կողմ և էլեկտրաեռացման սարքը և եռակցվող նյութը լինեն հողանցված:

Խտացված գազով բալոնները պետք է տեղափոխել միայն հատուկ պատգարակի միջոցով: Բալոնին չի թույլատրվում մոտենալ յուրոտված հագուստով, արգելվում է նաև բալոնների մոտակայքում ծխելը:

Արգելվում է տանիքում աշխատանքներն իրականացնելը, մշուշի, ամպրոպի և քամու 6 բալ արագության գերազանցման դեպքում:

9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

9.1 Շրջակա միջավայրի պահպանություն և մեղմացնող միջոցառումները

Ծրագրի համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին, ինչպես նաև ԱԶԲ բնապահպանական անվտանգության սկզբունքներին նախատեսվում է ապահովել բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) միջոցով: ԲԿՊ-ում պարունակում է Ծրագրի բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն և շահագործում) հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներն, ինչպես նաև մոնիտորինգի գործողությունները՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Ծրագրի համար մշակված ԲԿՊ՝ մեղմացնող միջոցառումները և մոնիտորինգի պլանն, ամբողջական ներկայացված են Հավելված 6-ում և Հավելված 7-ում:

ԲԿՊ-ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ի իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

Ստորև ամփոփ բերվում են նախատեսվող գործունեությունից ակնկալվող ազդեցությունները և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված հիմնական բնապահպանական, ինչպես նաև աշխատանքի և առողջության ապահովման միջոցառումները, որոնք պատշաճ ձևով կիրականացվեն ենթածրագրի իրականացման բոլոր փուլերի ընթացքում.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ,
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- շինարարական աղբի կանանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև շին. հրապարակում կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների տեղադրում,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան,
- շինարարական մեքենաների սահմանափակ տեղաշարժ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարների դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացում թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,

- մեքենաների անիվների լվացման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարներից, ներառյալ՝ բետոնաշաղախը՝ մոտոկա հանգույցներից,
- վառելիքի և նավթաման նյութերի պահումը կիրականացվի բետոնե, ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա,
- մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկումը կիրականացվի մասնագիտացված կենտրոններում,
- նախատեսվող գործունեության ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ,
- կապահովվեն առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման միջոցառումներ, ներառյալ՝ բանվորական կազմին սեզոնային արտահագուստի, անձնական պաշտպանիչ միջոցների տրամադրում:
- տարածքի կանաչապատ գոտիները կհամալրվեն արժեքավոր բուսականությամբ:

Հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային ուղիղ արժեքը (առանց հարկերի) գնահատվում է մոտ 1.5 մլն. ՀՀ դրամ: Նշված արժեքը ներառում է կենցաղային և շինարարական աղբի հեռացման, ծառերի տնկման և կանաչապատման աշխատանքները: Նշված միջոցառումների ծախսերը հաշվի են առնված դպրոցի նախագծի ծավալաթերթերում: Բնապահպանական կառավարման պլանում ներկայացված մնացած միջոցառումները կապալառուն կիրականացնի օժանդակ ծախսերի գումարից, որը կազմում է ընդհանուր նախահաշվի մոտ 2%-ը:

9.2 Մոնիտորինգ

ՀՏՁՀ-ի կողմից կանոնավոր մոնիտորինգ է իրականացվելու ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով: ՀՏՁՀ-ի բնապահպանության մասնագետները իրականացնելու են դաշտային ստուգայցեր՝ դպրոցի շինարարական տեղամաս ամսական երկու անգամ: Մոնիտորինգային արդյունքները գրանցվելու են ծրագրի շրջանակում մշակված մոնիտորինգի ստուգաթերթիկում:

Տեխնիկական վերահսկողության շրջանակներում կիրականացվի ամենօրյա հսկողություն, որը կներառի նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը և հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ ժամանակին կտեղեկացվի ՀՏՁՀ-ին:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակների չափագրումներն իրականացնել ազդակիր կողմերի համապատասխան բողոքների դեպքերում:

ՀՏՁՀ-ի կողմից նախատեսվող գործունեության իրականացման ողջ ընթացքում ներդրվելու է բողոքների անդրադարձման մեխանիզմ (ԲԱՄ): Շահառուների հետ կապի և բողոքների լուծման մեխանիզմների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ՀՏՁՀ-ի պաշտոնական կայքում (www.atdf.am):

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում պարտադիր է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NO_x, SO₂) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
- Օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող ջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս:
- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ շաբաթը մեկ հաճախականությամբ:
- Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
- Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:
- Հարակից տարածքներում կեղտաբազմազանության մոնիթորինգ 3 ամիս մեկ հաճախականությամբ:

10. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Բնապահպանական պետական փորձաքննության շրջանակում 2026 թվականի ապրիլի 3-ին, ժամը՝ 11:00-ին, Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի համայնքապետարանի նիստերի դահլիճում իրականացվել է նոր դպրոցի կառուցման նախագծի և նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում:

Հանդիպմանը մասնակցել են Վաղարշապատի համայնքապետարանի ներկայացուցիչներ, դպրոցի ներկայացուցիչներ, ներկայացուցիչներ պատվիրատու, նախագծային, շինարարական և ՇՄԱԳ իրականացնող կազմակերպություններից:

Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 22 աշխատանքային օր առաջ հանդիպման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է եղել «TV-ալիք» օրաթերթի 05.03.2026 համարում:

Հանրային քննարկման կազմակերպման և անցկացման համար լիազորված անձ է նշանակվել համայնքի արտաքին կապերի, զարգացման ծրագրերի և տուրիզմի բաժնի պատասխանատու Անի Թադևոսյանը: Շահագրգիռ հանրությունը հնարավորություն է ունեցել իր առաջարկությունները, դիտողություններն ու կարծիքները Վաղարշապատի համայնքապետարան ուղարկել նաև գրավոր:

Հանդիպման արձանագրությունը, մասնակիցների ցուցակը, հանրային քննարկման ժամանակ իրականացված լուսանկարները, ինչպես նաև համայնքի ավագանու համաձայնությունը նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ ներկայացվում են սույն ՇՄԱԳ հաշվետվությունը կից (Տե՛ս հավելված 8)

ՀԱՎԵԼՎԱԾ 1.ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ	 Կադաստրի կոմիտե
Սույն վկայականով հաստատվում է 7 ապրիլի 2026 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.		
1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ		
2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ Մարզ Արմավիր, համայնք Վաղարշապատ, գյուղ Ոսկեհատ, Մ. Մաշտոցի փողոց 1/4		
3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ Համայնքի ղեկավարի որոշում 20/02/2002թ.թիվ 5		
4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ Կադաստրային ծածկագիրը՝ 04-081-0030-0039 Մակերեսի չափը (հա)՝ 3.17674 Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵ ՓԱԿԱՆ ՈՒՆԹՅՈՒՆ		
		
ՎԿԱՅԱԿԱՆ N 07042026-04-0124, գաղտնաբառ՝ NSRU1PFCFLD		
Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով		
Էջ 1/2		

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	04-081-0030-0039-001	Դպրոց	2352.4 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	04-081-0030-0039-002	Պահեստ	56.1 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	04-081-0030-0039-003	Կաթսայատուն	70 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	04-081-0030-0039-004	Զուգարան	12.7 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5	04-081-0030-0039-005	Հրաձգարան	53.6 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6	04-081-0030-0039-006	Զրավազան	286.5 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Հողամասում առկա խորքային հորը և էլեկտրական իրենց զբաղեցրած հողամասերով դպրոցին չեն պատկանում:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՎԱԼԵՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԱՍՅԱԿԱՆ N 07 042026-04-0124, գաղտնաբառ՝ NSRU1IPFCFLD


Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2




Կադաստրի
կոմիտե

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՏԱՐԱԾՔԻ ԻՐԱԴՐԱՅԻՆ ՄԽԵՄԱ



ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՏԱՐԱԾՔԻ ԻՐԱՌԴԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ

Արմավիրի մարզ
Համայնք Կաղարշապատ գյուղ Ոսկեհատ
Հատված Կաղաստրային բարտեզից
Կաղաստրային ծածկագիր՝ 04-081-0030-0039
Մասշտաբ 1: 2000



սպասարկման գրասենյակ

Կ.Տ

[illegible]

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու մարմին
Ն Ա Խ Ա Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Փ ՈՒ Լ			
1. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում	ԲԿՊ-ի պահանջներն անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ դպրոցի շինարարության նշահագործման փուլերում:	1.1. Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև կապալառուի պայմանագրային փաստաթղթերում:	«Լուր» ՍՊԸ
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ			
Առողջություն և աշխատանքային անվտանգություն			
2. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	ԲԿՊ-ի պահանջների չկատարումը և դպրոցի կառուցման բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող են շրջակա միջավայրի վատթարացման պատճառ դառնալ: Շինհրապարակի ոչ պաշտոնական կազմակերպման պատճառով աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած վնասվածքը անընդունելի է:	2.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: 2.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մոտքը շինհրապարակ արգելելու համար. (ցանկապատում, պահակակետ և այլ): 2.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը (օր. չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում և այլն): 2.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում և կիրառվող տեխնիկայում: 2.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության միջոցների առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում: 2.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անհատական պաշտպանության միջոցներով, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ	«Լուր» ՍՊԸ

		օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ): 2.7. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել: 2.8. Աշխատողները պետք է անցնեն աշխատանքի անվտանգության հրահանգավորում, ինչը պատշաճորեն պետք է գրանցվի համապատասխան գրանցամատյանում: 2.9. Խստորեն պետք է պահպանվեն ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության պահանջներն ու նորմերը:	
Հանրության հետ կապ և հանրային իրազեկում			
3. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ	Ազդակիրների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում հնարավոր են նախատեսվող գործունեության ժամկետների հետաձգումներ:	3.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ / տեղեկատվական վահանակներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության, նրա գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց և նրանց հեռախոսահամարների/ էլեկտրոնային հասցեների մասին: 3.2. Շին հրապարակում անհրաժեշտ է ունենալ բողոքների գրանցամատյան և նշանակել պատասխանատու անձ, ով 15 օրյա ժամկետում պետք է պատասխանի դիմորդին՝ հարցի լուծման վերաբերյալ:	«Լուր» ՍՊԸ
Շրջակա միջավայրի պահպանություն			

4. Հողային աշխատանքներ , շինանյութերի փոխադրումներ , շինարարական այլ աշխատանքներ	1. Տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործուից առաջացած փոշու և այլ արտանետումների ազդեցությունը; 2. Շին. աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճի հետևանքով ազդեցությունը: 3. Հողային ռեսուրսների հնարավոր աղտոտումներ: 4. Ջրային ռեսուրսների հնարավոր աղտոտումներ:	4.1 Օդի աղտոտման և փոշու կառավարում 4.1.1.Փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրցանումների իրականացում: 4.1.2. Օդի որակի չափագրումների իրականացում ըստ անհրաժեշտության՝ ազդակակիր անձանց բողոքների դեպքում: 4.1.3.Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար; 4.1.4.Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով 4.1.5.Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով: 4.1.6.Անհրաժեշտ է ապահովել շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացումը: 4.2.Աղմուկի և թրթռումների կառավարում 4.2.1.Շին. հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին, իսկ չափագրումներ կիրականացվեն ըստ սահմանված ժամանկացույցի: 4.2.2.Աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին՝ սահմանափակվելով միայն թույլատրված ժամերի միջակայքում: 4.2.3.Մեքենաների ապահովվում խլացուցիչներով: Անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործման բացառում: 4.2.4.Շինարարության մեջ ներգրավված բանվորներին ԱՊՄ-ով, այդ թվում՝ ականջակալներով, ապահովում: 4.3. Հողային ռեսուրսների աղտոտվածության բացառում 4.3.1. Շինարարության մեջ ներգրավված տեխնիկան և մեքենա-սարքավորումները պետք է լինեն տեխնիկապես սարքին վիճակում: 4.3.2. Շինարարության մեջ ներգրավված տեխնիկան և մեքենա-սարքավորումները պարբերաբար պետք է անցնեն տեխնիկական ստուգում, իսկ լիցքավորումը իրականացվի շինհրապարակի տարածքից դուրս՝ մասնագիտացված ծառայություններ մատուցող ընկերությունների	«Լուր» ՍՊԸ
---	---	---	-------------------

		կողմից՝ բացառելով վառելանյութերի և քսայուղերի արտահոսքը շին հրապարակի տարածքում: 4.3.3. Անհրաժեշտ է շինաշխատանքների ընթացքում հնարավորինս բացառել հողային մակերեսների վրա անուղղակի ազդեցություններն, ինչպիսիք են շինթափոնների տեղադրում, արտադրական ջրերի /բետոնաջրերի հեռացում և այլ գործողություններ: 4.4. Ջրային ռեսուրսների աղտոտվածության բացառում 4.3.4. Անհրաժեշտ է շինհրապարակում ունենալ արտադրական ջրերի համար նախատեսված պարզարան: Նստեցումից հետո ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման և այլ հնարավոր նպատակներով, իսկ հատակի նստվածքը պարբերաբար կհեռացվի շինհրապարակից շինարարական աղբի հետ:	
5. Կենսաբազմազանություն	Շինարարական աշխատանքների ազդեցությունը հարակից բուսածածկույթի վրա, շինարարական հրապարակից դուրս տարածքների վնասման բացակայություն	5.1 Շինարարական աշխատանքների տարածքի սահմանափակում – աշխատանքներն իրականացնել միայն նախագծով նախատեսված տարածքում՝ բացառելով հարակից բնական տարածքների անհարկի խախտումը: 5.2 Բուսածածկի պահպանություն հնարավորության դեպքում պահպանել շինարարական տարածքում առկա ծառերը, թփերը և խոտածածկը: Բուսածածկի հեռացումը կատարել միայն անհրաժեշտության դեպքում և սահմանված տարածքում: 5.3 Ծառերի և թփերի պաշտպանություն շինարարական տեխնիկայի տեղաշարժից, հողի խտացումից և մեխանիկական վնասումից պաշտպանել պահպանվող ծառերն ու թփերը: 5.4 Հողի բերրի շերտի պահպանում բուսական հողի վերին բերրի շերտը հեռացնել, պահեստավորել առանձին և հետագայում օգտագործել տարածքի վերականգնման և կանաչապատման նպատակով: 5.5 Շինարարական տեխնիկայի տեղաշարժի վերահսկում տեխնիկայի և տրանսպորտային միջոցների երթևեկությունն իրականացնել նախապես սահմանված երթուղիներով՝ բնական բուսածածկի և կենդանիների կենսամիջավայրերի լրացուցիչ խախտումը բացառելու նպատակով: 5.6 Փոշու և արտանետումների նվազեցում շինարարական հրապարակների և ճանապարհների անհրաժեշտ խոնավեցում	«Լուր» ՍՊԸ

				իրականացնել՝ բուսականության վրա փոշու նստվածքի և դրա բացասական ազդեցության նվազեցման համար: 5.7 Թափոնների կառավարում շինարարական և կենցաղային թափոնները հավաքել և ժամանակավորապես պահեստավորել հատուկ հատկացված վայրերում՝ բացառելով դրանց տարածումը բնական միջավայրում:	
Շինարարական հրապարակի կազմակերպում					
6. Շինհրապարակի կազմակերպում	Շինհրապարակի կազմակերպումից ազդեցություններ	ոչ	ճիշտ բխող	6.1. Շին հրապարակն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես կառուցապատման ենթակա տարածքի ներսում: 6.2. Շին. հրապարակի կազմակերպման սխեմայում պետք է նշված լինեն շին. նյութերի պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն: 6.3. Անհրաժեշտ է նախատեսել ավազի, ցեմենտի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների, ինչպես նաև շինարարական աղբի պահեստավորումը փակ տարածքներում կամ դրանց ծածկումն անթափանց թաղանթներով: 6.4. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ցանկապատում, համապատասխան տեղեկատվական ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում: 6.5. Անհրաժեշտ է իրականացնել շենք ծածկումը շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով: 6.6. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց տեղամասերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում, տեղադրել նախագրուշացնող նշաններ:	«Լուք» ՍՊԸ

		6.7. Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակի տարածքից դուրս՝ համայնքում գործող մասնագիտացված լվացման կետերում:	
Երթևեկության կառավարում			
7. Շինհրապարակ մուտք ու ելք գործող մեքենաներ	Երթևեկության հնարավոր ազդեցություններն են. • երթևեկության խափանումներ • երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ • փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ • հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում • շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհներին վնաս	7.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով; 7.2. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհների նախնական վիճակը: 7.3. Դեպի շինարարական հրապարակ մուտքն ու ելքը պետք է կազմակերպել ընդհանուր երթևեկության և հասարակական անվտանգության համար նվազագույն խոչընդոտներով: 7.4. Նախքան շինհրապարակից դուրս գալը անհրաժեշտ է կազմակերպել տեխնիկայի անիվների և արտաքին մասի լվացում: 7.5. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ: 7.6. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում: 7.7. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս: 7.8. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի արտահոսքը կանխելու համար: 7.9. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և դրանք փոխարինել պատշաճ վիճակում գտնվող մեքենաներով:	«Լուք» ՍՊԸ
Արտակարգ իրավիճակների կառավարում			

8. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)	Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:	8.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; 8.2. Շինհրապարակը պետք է ապահովված լինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար: 8.3. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել համապատասխան ՀՀ օրենսդրական պահանջներին; 8.4. Վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում՝ ապահովված անթափանց հատակով և պատնեշով: 8.5. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը: 8.6. Շին. աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: 8.7. Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: 8.8. Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ: 8.9. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ	Լուր» ՍՊԸ
--	---	--	------------------

		օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար: 8.10. Արտակարգ պատահարի դեպքում դրանք պետք է գրանցվեն համապատասխան գրանցամատյանում:	
Թափոնների և նյութերի կառավարում			
9. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ	Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից, իրենցից ներկայացնում են պոտենցիալ վտանգ:	9.1. Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: 9.2. Կանոնավոր կերպով (ամենաուշը 3 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շին. թափոններն ու աղբը՝ փոշու և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար: 9.3. Շին հրապարակի տարածքում անհրաժեշտ է հատկացնել շին. աղբի նախնական կուտակման վայր: 9.4. Շինարարական աղբը անհրաժեշտ է տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր՝ հատուկ սահմանված երթուղով: 9.5. Շինարարական հավաքված վտանգավոր թափոնները պետք է պատշաճ կերպով հավաքվեն և հեռացվեն համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: 9.6. Պետք է կատարվեն թափոնների հեռացման վերաբերյալ համապատասխան գրանցումներ/գրառումներ՝ որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ և նախատեսվածի համաձայն: 9.7. Կենցաղային աղբի հավաքումը պետք է իրականացվի դրա համար նախատեսված տարրաներում և պարբերաբար հեռացվի՝ համապատասխան աղբահավաք կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով: 9.8. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և շին. աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև շին. աղբի հեռացման նպատակով հասարակական աղբամանների օգտագործումը:	«Լուք» ՍՊԸ
Աշխատողների վերապատրաստում			

10. Աշխատողների վերապատրաստում	Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:	10.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն; 10.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է իրազեկել աշխատանքի անվտանգության և տարբեր արտակարգ իրավիճակների դեպքում ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ;	«Լուք» ՍՊԸ
Աշխատանքային տեղամասի վերականգնում, բարեկարգում, տարածքի կանաչապատում			
11. Շինհրապարակի վերականգնում, տարածքի բարեկարգում 12. Կանաչապատում	Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շին. տեխնիկան, բոլոր շին պարագաները, շինարարական նյութերը, թափոնները և այլն:	12.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատը և այլն: 12.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները; 12.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից, հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը; 12.4. Անհրաժեշտ է կատարել նախագծով նախատեսված բարեկարգման աշխատանքները: 12.5. Անհրաժեշտ է ապահովել կանաչապատման աշխատանքները՝ դրանք համաձայնեցնելով Վաղարշապատի համայնքապետարանի հետ:	«Լուք» ՍՊԸ
ՀԵՏՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈԻԼ			
13. Թերություններ ի վերացման աշխատանքներ	Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները	13.1. Անհրաժեշտ է ապահովել նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատճած իրականացումը:	«Լուք» ՍՊԸ

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԲՆԱԴԱՅԴԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱԴՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Վայր/ Գործողություն / Փուլ	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխանատուն ը	Մոնիտորինգի հաճախականությ ուն
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ						
1. Շրջակա միջա- վայրի պահպանո ւթյուն	- փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ, - աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում - վառելանյութերի և քսայուղերի հնարավոր արտահոսք - կենսաբազմազանության պահպանություն	շին. հրապարակ,	- ակնադիտական ստուգումներ՝ շին. հրապարակ ստուգայցերի միջոցով, - բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում, - փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային չափում և վերլուծություն, - ակնադիտական ստուգումներ՝ շին. հրապարակ ստուգայցերի միջոցով, - ֆլորայի և ֆաունայի արժեքավոր տեսակների կամ ծառատեսակների իդենտիֆիկացում, եթե կան այդպիսիք:	- գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը, - փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում, - Շինհրապարակի տարածքում ակնադիտական ստուգմամբ վառելանյութերի և քսայուղերի արտահոսքի հետքեր չեն հայտնաբերվել, - տեսակի անվանում, քանակ, նկարագիր, տեղադիրք:	Կապալառ ու	Կանոնավոր ժամանակացույց ին համապատասխան

2. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	- շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ:	- փաստաթղթերի ստուգում	- Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը համապատասխանում է պետ. մարմինների կողմից թույլատրված տարածքին, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
3. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը	- երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը; - հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը, ճանապարհներին և այլ կառույցներին պատճառ-վող վնասներ:	Ճանապարհների օգտագործումն սարքավորումն ե-րի և նյութերի տեղափոխության համար, շին. հրապարակի մոտեցման մուտքերը	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ կատարած ստուգայցեր	- երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
4. Թափոնների և շին. նյութերի	- Շինարարական թափոն-ների և նյութերի	շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգում,	- շին աղբը, կենցաղային աղբը, ոչ պիտանի և	Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին

կառավարում	կառավարումը շինարարության ընթացքում		- շինհրապարակ, թափոնավայրեր կատարած ստուգայցեր	ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում, - թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:		համապատասխան
5. Շինհրապարակի վերականգնում, բանվորական հագուստի, անվտանգության կանոնների, սանիտարահիգիենիկ կանոնների պահպանում, կանաչապատում և տարածքի	- շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված է:	Տեղամասեր կատարած ստուգայցեր	- Աշխատողների սանիտարահիգիենիկ պայմանները համապատասխանում են ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին: - Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման ուղղված	- Պահպանված են շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնները, - ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից,	Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

բարեկարգում			մոնիթորինգն իրականացված է: - Շինհրապարակի վերականգնման և բարեկարգման պլանն առկա է: - Բոլոր մակերեսներն՝ այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:			
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ) ՓՈԻԼ						
6. Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Բարեկարգման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ	Կապալառու	Շինարարական աշխատանքների ավարտից հետո

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

tvn hf

9-15 ՄԱՐՏ № 11(1481) 05.03.2026

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

8 ՄԱՐՏ. Կանանց



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԱՐԸՆԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿԱՄԱՆ


«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ Կառավարության 19.11.2014 թվականի թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով, **2026 թվականի ապրիլի 3-ին, ժամը 11:00-ին** Վաղարշապատի համայնքապետարանի վարչական շենքում /հասցեն՝ ք.Էջմիածին Սք. Մ. Մաշտոցի 0 շենք/ տեղի կունենա «Լուք» ՍՊԸ-ի կողմից /ՀՎՀՀ 00921258, գրանցման համար 282.110.1069849, հասցե՝ ք.Երեւան Մարշալ Բաղդասյան պող. 23 շենք, 26 բնակարան/ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ Մ.Մաշտոցի փողոց թիվ 1/4 հասցեում նախատեսվող դպրոցի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ հանրային քննարկում /1-ին փուլ/:

Հանրային լսման կազմակերպման եւ անցկացման համար պատասխանատու է նշանակվել համայնքի արտաքին կապերի, զարգացման ծրագրերի եւ տուրիզմի բաժնի պատասխանատու Անի Թադևոսյանը /էլ. փոստ՝ info@ejmiatsin.am, հեռ.՝ /0231/ 5 36 63, ներքին համարներ 230 /: Շահագրգիռ հանրության կողմից **2026 թվականի ապրիլի 1-ը** ներառյալ ընդունվում են առաջարկություններ, դիտողություններ եւ կարծիքներ, որոնք կարող եք ուղարկել **գրավոր՝** Վաղարշապատի համայնքապետարան, ՀՀ, Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սք. Մ. Մաշտոցի փող. 0 հասցեով կամ էլեկտրոնային՝ info@ejmiatsin.am էլ. հասցեով:

Հանրային քննարկումներին մասնակցելու համար կարող եք գրանցվել նախօրոք՝ info@ejmiatsin.am էլեկտրոնային փոստի միջոցով:

Մասնակիցների ցանկ

«ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրում դպրոցի կառուցում» նախատեսվող գործունեության տեղակայման նախագծի վերաբերյալ 2026թ-ի ապրիլի 3-ին ժամը 11:00-ին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի դահլիճում կազմակերպված հանրային ծանուցման և քննարկումների (1-ին փուլի հանրային ծանուցում և քննարկումներ)

N	Անուն, ազգանուն	Կազմակերպություն/պաշտոն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	Բենիկ Հարությունյան	Հիմաճ ԺԴՈՒ	0949228523	
2.	Ռոմա Կոչարյան	Հարությունյանի համայնքապետարան	094-28-68-76	
3.	Անի Քոչարյան	Հարությունյանի համայնքապետարան	033-29-04-01	
4.	Լուսինա Գևորգյան	Հարությունյանի համայնքապետարան	098-01-21-63	
5.	Ռաբինա Նիկողոսյան	Հարությունյանի համայնքապետարան	094-86-83-34	
6.	Դանիել Գրիգորյան	Հարությունյանի համայնքապետարան	093-15-23-00	
7.	Անի Մարգարյան	Հարությունյանի համայնքապետարան	088 1206-71	
8.	Գրիգոր Էսախանյան	Գրիգորյան	098060244	
9.	Վարդան Էդուարդ	Վարդանյանի համայնքապետարան	077417848	
10.	Անի Կոչարյան	Հարությունյանի համայնքապետարան	094-202-966	
11.	Ռոմա Նավասյան	Հարությունյանի համայնքապետարան	055 87-89-07	
12.	Գրիգոր Մարգարյան	Հարությունյանի համայնքապետարան	094-68-36-01	
13.	Լուսինա Գրիգորյան	Գրիգորյան	098-57-54-01	
14.	Արմեն Գևորգյան	Կոչարյան	093 34-95-24	
15.	Արմեն Կոչարյան	Կոչարյան	077900736	
16.	Վարդան Վրեժնյան	Վրեժնյանի համայնքապետարան	097113606	
17.	Զարինա Եսախանյան	Գրիգորյանի համայնքապետարան	077-447435	
18.	Դանիել Գրիգորյան	Գրիգորյանի համայնքապետարան	077-047533	
19.	Լուսինա Գրիգորյան	Գրիգորյանի համայնքապետարան	077190149	

N	Անուն, ազգանուն	Կազմակերպություն/պաշտոն	Հեռախոսահամար	Ստորագրություն
20.	Բրիտանիա Միլիցիա	«Միլիցիա» ՖԲ. զորք» վերականգնողական	095050714	Միլիցիա
21.	Վրացական Էմբլեմ	«Մեկնեմ» ՖԲ. զորք» վերականգնողական	093-544425	Վրացական
22.	Մոսկովյան Պարապլայ	Վերականգնողական Վերականգնողական	093-418062	Մոսկովյան
23.	Ֆեդերալ Մոնիթինգ	ՖԲ. զորք, Մոնիթինգ ՖԲ. զորք	093-18-58-13	Ֆեդերալ
24.	Վերականգնողական	Վերականգնողական	033-132-232	Վերականգնողական
25.	Վերականգնողական	Վերականգնողական	091794459	Վերականգնողական
26.	Վերականգնողական	Վերականգնողական	094533361	Վերականգնողական
27.				
28.				
29.				
30.				
31.				
32.				
33.				
34.				
35.				
36.				
37.				
38.				
39.				
40.				
41.				
42.				







ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի
Մ. Մաշտոցի փողոց թիվ 1/4 հասցեում նախատեսվող դպրոցի կառուցման
նախագծային փաստաթղթերի վերաբերյալ (1-ին հանրային քննարկում)

ք. Էջմիածին

03.04.2026թ.

2026 թվականի ապրիլի 3-ին, ժամը 11:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի վարչական շենքում (Հասցեն՝ ք. Էջմիածին Սք. Մ. Մաշտոցի 0 շենք) տեղի ունեցավ «Լուք» ՍՊԸ-ի կողմից (ՀՎՀՀ 00921258, գրանցման համար 282.110.1069849, հասցե՝ ք. Երևան Մարշալ Բաղդամյան պող. 23 շենք, 26 բնակարան) ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի Մ. Մաշտոցի փողոց թիվ 1/4 հասցեում նախատեսվող դպրոցի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել հանրության համար: Հանրային քննարկմանը մասնակցել են Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավարը, «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենը, «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչական կազմը, Վաղարշապատի համայնքապետարանի ոլորտային պատասխանատուներ, նախաձեռնող և ՇՄԱԳ իրականացնող ընկերությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև բնակիչներ:

Ելույթներ.

Բացման խոսքով հանդես եկավ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի Արտաքին կապերի, զարգացման ծրագրերի և տուրիզմի բաժնի առաջին կարգի մասնագետ Մարիամ Զաքարյանը:

Մ. Զաքարյան – Ողջունելով ներկաներին Մ. Զաքարյանը ներկայացրեց հանդիպման հիմնական նպատակը՝ նշելով, որ տեղի է ունենում Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի Մ. Մաշտոցի փողոց թիվ 1/4 հասցեում նախատեսվող դպրոցի կառուցման նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ առաջին հանրային քննարկումը, որի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է հանրության ծանուցում:

Այնուհետև նախագծի մանրամասները ներկայացնելու նպատակով խոսքը փոխանցեց ՇՄԱԳ մասնագետ Մերի Վարդանյանին:

Մ. Վարդանյան – ՇՄԱԳ մասնագետ Մերի Վարդանյանը ներկայացրեց, որ Կառավարության դպրոցաշինության ծրագրում ներառված է նաև Ոսկեհատ բնակավայրի դպրոցի կառուցման նախագիծը: Նախագիծը ըստ ՇՄԱԳ-ի փորձաքննության մասին օրենքի ենթակա է ՇՄԱԳ փորձաքննության: Դպրոցը տիպային է, նախագծվել է որպես միջնակարգ դպրոց՝ 432 աշակերտի համար:

Այնուհետև անդրադարձավ նախագծի շրջանակներում բնապահպանական հնարավոր ազդեցություններին՝ նշելով, որ ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվող աշխատանքները չեն թողնի բացասական ազդեցություն տարածքի շրջակա միջավայրի վրա: Սակայն որոշակի բացասական ազդեցություններ կանխատեսվում են շինարարության փուլում (օրինակ՝ փոշի, աղմուկ), որոնք կլինեն սահմանափակ և կառավարելի:

Նշվեց նաև, որ նոր դպրոցի կառուցման ընթացքում տարածքը կպարսպապատվի՝ գործող դպրոցի բնականոն գործունեությանը չխանգարելու նպատակով:

Նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա դպրոցի ուսուցիչներին և աշակերտներին իրենց աշխատանքն ու ուսումնական գործընթացի կազմակերպումն անցկացնել առավել անվտանգ, բարեկարգ և հաճելի միջավայրում:

Այնուհետև խոսքը փոխանցվեց «Լուր» ՍՊԸ նախագծող կազմակերպության ճարտարապետ Արտակ Կարապետյանին:

Ա. Կարապետյան – Համաձայն նախագծի դպրոցը նախատեսվում է կառուցել 432 աշակերտի համար: Դպրոցը երկհարկանի է առկա է նաև նկուղային հարկ: Շենքի ծավալում նախատեսվում է ունենալ 2 փակ ներքին բակ ապակե ծածկի տակ՝ լրացուցիչ ռեկրեացիոն գոտիներին լուսավորություն ապահովելու համար: Առաջին հարկում տեղակայված են առաջինից մինչև 5-րդ դասարանների 2-ական լսարանները, նախադպրոցական դասարանը, գրադարանն ու համակարգչային տեխնիկայի կաբինետը, ռազմագիտության կաբինետը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներն իրենց ընդունարանով, աշխատանքի ուսուցման կաբինետը, բժշկի սենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, սպորտդահլիճը իրեն կից հանդերձարաններով և

մարզիչի սենյակով, ճաշարանը և խոհանոցը, ինչպես նաև թվով 3 սանհանգուցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Նախատեսված է նաև սանհանգուց հաշմանդամների համար: Մուտքային գոտուն կից տեղակայված են հաշմանդամների համար նախատեսված ուղղահայաց ամբարձիչը, ծնողների սպասասրահը, ինչպես նաև երկրորդ հարկի հետ կապ ստեղծող ամֆիթատրոնը: Երկրորդ հարկում առկա են նաև պատշգամբներ: Հարկում տեղակայված են 6-ից մինչև 12-րդ դասարանների դասասենյակները, 2 լեզվի կաբինետ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, ռեսուրսային կենտրոնը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, կենսաբանության և քիմիայի մասնագիտացված դասասենյակները՝ իրենց կից լաբորատորիայով, ֆիզիկայի մասնագիտացված դասասենյակը՝ իրենց կից լաբորատորիայով, հանդիսությունների դահլիճը՝ իրենց սպասարկող սենյակների խմբով, թվով 4 սանհանգուցներ, այլ օժանդակ սենյակներ և տարածքներ:

Ա. Կարապետյանը հավելեց, որ նախատեսվում է ունենալ կանաչապատ բակային տարածք, որի համար անհրաժեշտ է կանաչապատել տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսատեսակներով:

Դպրոցի շենքն ապահովված է անհրաժեշտ բոլոր պայմաններով հաշմանդամների և բնակչության այլ սակավաշարժուն խմբերի (ԲՄԽ) կենսագործունեության ապահովման համար: Հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժի նպատակով շենքը համայրված է թեքուղիներով և վերելակով:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են մի շարք դրական ազդեցություններ, մասնավորապես.

- ուսումնական և աշխատանքային պայմանների բարելավում,
- դպրոցի հարակից տարածքի բարեկարգում՝ խթանելով նաև առողջ ապրելակերպի զարգացմանը՝ ի հաշվիվ բարեկարգ և ժամանակակից բացօթյա մարզահրապարակների,
- բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործում և պահպանություն:

Մասանկիցների կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

Հարց 1. Դ. Հովհաննիսյան, դպրոցի զինղեկ – Արդյո՞ք նախատեսվում է դեպի դպրոց փանող ճանապարհների ասֆալտապատում:

Պատասխան 1. Ա. Կարապետյան, «Լուր» ՍՊԸ – Այո, նախատեսվում է գլխավոր ճանապարհի ասֆալտապատում:

Հարց 2. Ս. Շմավոնյան դպրոցի փնտրեն – Արդյո՞ք աշակերտները շարունակելու են սովորել իրենց ներկայիս դպրոցում մինչև նոր դպրոցի կառուցման ավարտը:

Պատասխան 2. Ա. Կարապետյան, «Լուր» ՍՊԸ – Այո՛, աշակերտները շարունակելու են սովորել գործող դպրոցում, դպրոցի շենքը ամբողջությամբ կապամոնտաժվի միայն նոր դպրոցի կառուցման ավարտից հետո:

Հանդիպումն ամփոփեց Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի Արտաքին կապերի, զարգացման ծրագրերի և տուրիզմի բաժնի առաջին կարգի մասնագետ Մարիամ Զաքարյանը՝ շնորհակալություն հայտնելով մասնակիցներին և նշելով, որ մոտակա ավագանու նիստին այս հարցը կներկայացվի ավագանու քննարկմանը:

Արձանագրությանը կցված է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝ համապատասխան ստորագրություններով:

Քննարկման պատասխանատու՝

Անի Թադևոսյան,

Վաղարշապատի

համայնքապետարանի

աշխատակազմի Արտաքին կապերի,

զարգացման ծրագրերի և տուրիզմի

բաժնի առաջատար մասնագետ

Մարիամ Զաքարյան,

Վաղարշապատի համայնքապետարանի

աշխատակազմի Արտաքին կապերի,

զարգացման ծրագրերի և տուրիզմի

բաժնի առաջին կարգի մասնագետ

Քննարկման վարող՝

